

ALICE NAVASARGIAN

*In dedication to
my family*

*Edward. André. Edith. and Aida
for their continuous love and support*

IRAN - ARMENIA

GOLDEN BRIDGES

20TH CENTURY IRANIAN-ARMENIAN PAINTERS

The author expresses her gratitude to

HIS HOLINESS KAREKIN I
Supreme Patriarch and Catholicos of All Armenians
For His Patronage and Encouragement

Very Rev. Yeghishe Mandjikian
Primate of the Prelacy of Cyprus

Shahen Khatchaturian, *art critic*
Curator of the National Gallery of Armenia, Yerevan
Editor of the volume

Glendale, USA

1997

Նեղինակը երախտագիտութիւն է յայտնում

Երեւանի Պետական պատկերասրահին, գրքի նախաբանի բաժնի նկարները տրամադրելու համար

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ՝

Պողոս Պողոսեանին (Երևան)

Երանդ Միքայելեանին (Քալիֆորնիա)

Էդո Տէր Յակոբեանին (Լոնդոն)

Դոկտ. Զաւէն Խաչատուրեանին (Քալիֆորնիա)

ԹԱՐԳՄԱՆԻՉ (անգլերէն)՝

Պրոֆ. Պարոյր Տէր Մկրտչեանին (Ֆրեզնո, Քալիֆորնիա)

ՆՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ՝

Ռազմիկ և Նուրի Նաթիմեաններին (Մոնթրէալ)

Իրանահայ բոլոր այն անձանց, ովքեր սիրով տրամադրեցին իրենց մօտ պահող գործերը լուսանկարելու և օգնեցին տեղեկութիւններով:

The author acknowledges

Armenian National Gallery in Yerevan, for providing all the paintings of the editorial section for photography

PHOTOGRAPHERS

Bogos Bogosian (Yerevan)

Yervand Mikayelian (California)

Edo Der-Akopian (London)

Dr. Zaven Khachaturian (California)

TRANSLATOR (English)

Prof. Barlow Der Mugrdachian (Fresno, California)

PUBLISHERS

Razmik and Hourii Hakimian (Montreal)

All Iranian-Armenian individuals, who assisted me with informations and provided paintings for photography.

All Rights Reserved.

No parts of this publication may be reproduced or used without the written permission of the author.

© 1997 Alice Navasargian

AAA Publishing House

ISBN 0-9697620-0-6

Printed in Canada



Ծնել եմ Թաբրիզում: Փոքրուց սիրել եմ արեստը, յատկապես նկարչութիւնը: Ինձ համար անվերջ հիացումի մթնոլորտ են եղել իրանական նրբագեղ մանրանկարչութիւնն ու ճարտարապետութիւնը: Իսֆահանի համալսարանում հայագիտութիւն ուսանած տարիներիս, որպէս իմ աւարտաճառս ընտրել եմ Իրանահայ արեստագէտներին, որոնց ստեղծագործութեան զգալի մասը ներշնչած է Իրանի մշակոյթի ոգով: Ու ծնեց մի բռուն փափաք՝ իմ համեստ ուժերս ներդնել ու իմ հայրենակից նկարիչների մասին հաւաքած նիւթերը ամփոփել մէկ աշխատութեան մէջ:

Տարիներ անց, երբ այցելեցի Հայաստան ու Ազգային պատկերասրահում ծանօթացայ մեր հայրենի նկարիչների գործերին՝ նփրած իմ ծննդավայր երկիր Իրանին, ուղղակի ցնցեցի: Որոշեցի մի ամբողջական հատորի մէջ զետեղել նաև իրենց ստեղծագործութիւնը Իրանի հետ առնչած հայրենի նկարիչների երկերը և անւանել գործս՝ «Իրան-Հայաստան, Ոսկի Կամուրջներ. 20-րդ դարի Իրանահայ նկարիչներ»:

Եթէ այս ժողովածուն դրական արձագանք ստանայ գեղարեստասէրների կողմից, ես հոգեպէս վարձատրւած կզգամ ինձ:

I was born in Tabriz, Iran. Since childhood, I have loved art, especially painting. Iran's elegant miniature paintings and architecture have been a constant source of wonder for me. During my years at the University of Isfahan, studying Armenology, my thesis was about the Armenian artists of Iran, many of whose works were influenced and inspired by the spirit of Iranian culture. Thus, an ardent desire grew within me to apply my modest talents in collecting material about Iranian-Armenian artists and to publish it in a book.

Years later, when I visited the National Gallery of Art in Yerevan, Armenia, and became acquainted with those works by Armenian painters, dedicated to my native country, Iran, I was amazed. Why had all of these works remained unknown to us? I decided, therefore, to place in the same book the works of Armenian artists influenced by Iranian art, and to name that publication "Iran-Armenia: Golden Bridges, 20th Century Iranian-Armenian Painters."

If this collection is received with enthusiasm by art-lovers, I will feel greatly rewarded.



ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH

CATHOLICOS
OF ALL ARMENIANS

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Հոգեկան գնահատությամբ ողջունում ենք ի լոյս ընծայումը այս շքեղատիպ հատորի, որի գոյառման առաջին վկաներից և քաջալերողներից մէկն ենք եղել այն օրերին, երբ վարում էինք Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդական պաշտօնը 1971-73 տարիներին: Հատորի հեղինակը, Տիկին Ալիս Նաասարգեան (այն ատեն Մինասեան), ուսանողուի էր Իսֆահանի Համալսարանի Հայագիտական բաժնում, որտեղ մենք երբեմն դասախօսութիւններ էինք տալիս հայ մատենագրութեան և մշակոյթի մասին:

Գնահատում ենք նրա հետևողական սերն ու հետաքրքրութիւնը հանդէպ հայ մշակոյթին և յատկապէս իրանահայ գեղանկարչական արուեստի ժառանգութեանը: Այդ հետազօտական և տքնաչափ աշխատանքի պտուղն է սոյն հատորը:

Հայկական-իրանական յարաբերութիւնները մշակոյթի, ինչպէս նաև հասարակական կեանքի այլազան բնագաւառներում, եղել են շատ սերտ և փոխշահաւէտ: Մենք Նոր-Ջուղայում տեսել ենք այդ յարաբերութեան շօշափելի և պերճախօս վկայութիւնները: Ուրախ ենք որ հայ արուեստի (յատկապէս ԺԹ և Ի դարերի շրջանի) բազմահմուտ մասնագէտ Շահէն Խաչատրեանը իր ներածականով և խմբագրական աշխատանքով ճոխացրել է սոյն հատորի բովանդակութիւնը, որի համար յայտնում ենք մեր գնահատանքը:

Մենք վստահ ենք, որ սոյն հատորը պիտի արժանանայ ժողովրդական ընդունելութեան, որով առաւել ևս պիտի պայծառանայ համապատկերը հայկական-իրանական փոխյարաբերութիւնների, որոնք ներկայումս Հայաստանի ազատ ու անկախ Հանրապետութեան և Իրանի Իսլամական Հանրապետութեան օրերին նոր առաջընթաց են արձանագրում յօգուտ երկու հարևան երկրների և ժողովրդների սերտ բարեկամութեան և գործակցութեան ամրացմանը և զարգացմանը:

Մեր խոր շնորհակալութիւններն ենք յայտնում Տէր եւ Տիկին Եղուարդ և Ալիս Նաասարգեաններին, որոնք սիրայօժար կամքով և մշակութասէր ու հայրենանուէր զգացումներով առաջնորդուած՝ սոյն հատորի նիւթական հասոյթը յատկացնելու են հայութեան «Սրբութիւն Սրբոց»ին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների բարեգարդման և լաւագոյն պայմանների մէջ պահպանման ու ներկայացման այնքան կենսական և օգտաշատ գործին:

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Արմեն Սևադա Կարաբեգյան
Armen Sevada Kharabegian

ԵՂԻՑԻ ԼՈՅՍ-LET THERE BE LIGHT (p. 4)
Oil, wood and steel, 92 x 77cm.

ՆԱԻԱՏՔ-FAITH (p. 6)
Zinc, steel and granite, 160 x 80 x 15.5cm.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

FATHERLY MESSAGE OF APPRECIATION

It is with deep spiritual satisfaction that I welcome the publication of this volume. I have been one of the first witnesses to the genesis of the book. In the time when (1971-1973) I was the Prelate of the Irano-Indian Armenian diocese in New Julfa, Isfahan, I used to give lectures in Armenian classical literature and culture at the Faculty of Armenology in the Isfahan University. Mrs. Alice Navasargian (Minassian) was a student with special interest in arts, namely, in painting. I tried to encourage her in the preparation of her thesis on the Iranian Armenian painters.

I appreciate her continuous love for and lively interest in Armenian culture, and particularly in the Armenian-Iranian cultural heritage. This volume is the fruit of her dedicated and perseverant work.

In history close relationships have characterized the cultural and social life of the Iranian and Armenian peoples. I have seen personally the tangible and eloquent signs of such relationships in New Julfa, Isfahan. I am happy that one of the erudite experts on Armenian art history (especially the 19th and 20th centuries) Mr. Shahen Khachaturian has made an important contribution to this volume with an introduction and editorial work thus setting the book in his perspective. I thank and appreciate him for his contribution.

I welcome the publication of this volume at this particular time when Armenia has entered a new era of freedom and independence with the proclamation of the Independent Republic of Armenia (September 21, 1991) and has developed, and is ever-increasingly developing, close ties of cooperation with the Islamic Republic of Iran. I believe the publication of this volume will contribute towards the promotion of such mutually enriching relationship.

My deep thanks to Mr. and Mrs. Edward and Alice Navasargian who gave tangible expression of their love for and dedication to Armenian cultural heritage and decided to allocate the whole income of this volume for the betterment of the conditions and the promotion of the services of the museums of our Mother See of Holy Etchmiadzin, the birthplace of our nation as a Christian nation.

Karekin I

KAREKIN I
CATHOLICOS OF ALL ARMENIANS

Հասակ սը կայ մեր կենաց մէջ,
Որ ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ սը որ հոգին ի տենչ
Յիշատակաց կը կարօտի:

Ն. Լուսինեան, 19-րդ դար

Յիշատակների կանչն ու սանաւանդ իր մէջ զարկերակի նման տրոփող բնածին սէրը դէպի արեւտը մեր ազնիւ հայրենակցուհուն՝ Ալիս Նաւասարգեանին սղել է ձեռնարկելու այս աշխատութիւնը: Դեռ Իսֆահանի համալսարանի բանասիրական բաժնում ուսանելիս նա հանդիպել է Իրանում ապրող գրեթէ բոլոր հայ արեւստագէտներին, հակիրճ բնութագրումներով շարադրել նրանց ստեղծագործական դիմանկարներն ու կենսագրականները և այդ ամէնն ամփոփել մէկ աշխատութեան մէջ, ներկայացնելով իբրև աւարտական թեզ: Երջանկութիւն էր երիտասարդ հեղինակի համար, որ իր աշխատութեան առաջին խրախուսողն ու խմբագիրն է դարձել այն ժամանակ իրանահայութեան հոգևոր առաջնորդ, ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը:

Տարիներ անց բնակութիւն հաստատելով ԱՄՆ-ում, Ալիս Նաւասարգեանը ապրել է յիշատակների կարօտով, շարունակել է ընդարձակել իր աշխատութիւնը, որոնել ու գտել է Իրանում ծնած և այնուհետև տարբեր երկրներում հանգրքուանած արեւստագէտների, իր գրքին տալով որոշակի հանրագիտարանային բնոյթ: Երբ ծանօթանում ես նրա աշխատութեանը, կլանուում ես ոչ այնքան շարադրանքի ծաւալով, որքան արեւստագէտների ընդգրկման լիութեամբ ու բազմազանութեամբ: Ակամայ գարմանք ես ապրում, թէ որքան թերի ու աղօտ են եղել մեր պատկերացումները հարևան երկրում գոյատևող հայկական հոծ գաղութի մշակութային կեանքի և յատկապէս նկարիչ-ստեղծագործողների սասիւն: Անգամ Օննիկ Աւետիսեանի «Հայ նկարիչներ և քանդակագործներ» ֆրանսերէն մեծարժէք աշխատութեան մէջ Իրանին նիւրած բաժնում յիշատակում են միայն մի քանի նկարիչներ:

Մարդու մէջ «ամենայն իղձ կ'աւարտի» թերևս նրա գիտակցական կեանքի գազաթնային շրջանում: Բայց պատահում է և հակառակը, երբ իղձը ծնում է նոր իղձ, կամ ինչպէս Չարենցն է գրում՝ «երագում երագ ես տեսնում»: Իղձերի, երագների հրաշակերպ իրականացումը տեղի է ունենում պարագաների կտրուկ ու երջանիկ փոփոխութիւնների շնորհիւ: Ալիս Նաւասարգեանի նոր իղձի աղբիւրը, արարիչ խթանը դարձան հայրենիքը և մասնաւորաբար վրձնի այն վարպետների (Յ. Յովնաթանեան, Վ. Սուրէնեանց, Մ. Սարեան, Յ. Կոչոյեան, Ս. Խաչատուրեան և այլք) ստեղծագործութիւնները, որոնք սկսած 19-րդ դարու վերջերից կլանող մի ներքին պահանջով ձամբորդել են Իրան, իրենց գործերում արտացոլել այդ երկրի գեղեցկութիւնները: Վրձնի ուժով նրանք թափանցել են իրանեան պոէզիայի թովիչ խորքերը, պոէզիայ, որ բազմիցս թարգմանել ու այնքան հարազատ է դարձել հայոց հոգուն, իբրովի բեկելով հայ նկարիչների հրաշալի պատկերագրողութեան մէջ: Այդ ամէնի հետ Ալիս Նաւասարգեանը ծանօթացաւ Երևանում, Ազգային

պատկերասրահում, Մ. Սարեանի, Յ. Կոչոյեանի թանգարաններում, որոնք նա առաջին անգամ տեսաւ 1996-ին: Զարմանալի չի թում, որ մի քանի ամիս անց, նա կրկին Հայաստանում էր:

Եւ ահա, կտրուկ փոփոխում ու նոր գոյներ է ստանում Ալիս Նաւասարգեանի աշխատութիւնը, վերածելով նկարչական արեստի լեզուով խորհրդանշաւծ Իրան-Հայաստան կապի եզակի յուշահատորի:

Հիմա, երբ ակնյայտօրէն վերահաստատում ու սերտանում են Իրանի հետ Հայաստանի տնտեսական ու մշակութային կապերը, Ալիս Նաւասարգեանի ձեռնարկումը ստանում է բացառիկ արժէք, ընկալւում իբրև առաջին անգամ հոգևոր կամուրջներին նիւրած ու դեռ երկունքի մէջ գտնուող այլաբնոյթ աշխատութիւնների ծննդեան:

Անշուշտ, ցանկալի կը լինէր, որ հատորում ընդգրկուէին նաև, ինչպէս նկատում է հեղինակը, ուշ միջնադարի իրանահայ նկարիչներ Մինասը (Զոհրաբեան), Յովհաննէս Մրթուզը, երկար տարիներ Ռուսաստանում աշխատած Աստաճատուր (Բոգդան) Սալթանովը, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքն ու այլ եկեղեցիներ, պալատներ զարդարած նկարիչները, որոնց շատերի գործերի վերատպումներն իսկ բացակայում են հայ արեստի պատմութեանը նիւրած գրքերում ու մնում են անծանօթ արեստագիտական շրջանակներում: Նշենք, սակայն, որ յիշատակւած նկարիչները պատկանում են 17-18-րդ դարերին, մինչդեռ, ինչպէս ընթերցողը դիտութեամբ կը նկատի, հեղինակի նախասիրութիւնները հակում են դէպի հայկական արեստի նոր շրջանը, որն սկսում է 19-րդ դարի կէտերից:

Անկախ այս ցանկութիւնից, Ալիս Նաւասարգեանի գործը սպառնիչ է իր հետապնդած նպատակով և կարող է մեկնակէտ ծառայել իրանահայ արեստը հետազոտողների համար: Հարկ է անկեղծօրէն շնորհաւորել հեղինակին, մեր մշակոյթի անդաստանում գոյացած բացը լրացնելու համար, մի հանգամանք, որ օգնելու է արդի հայ արեստի պատմութեան ամբողջական պատկերի ստեղծմանը և, որ պակաս կարևոր չէ, ոգևորելու է այլ նիւրեալների, որ ձեռնամուխ լինեն մեր այլ գաղթօջախներին վերաբերող նմանօրինակ գործերի հրատարակմանը: Արեստասէրներին ընծայած Ալիս Նաւասարգեանի այս գիրքը պիտի սիրեն ու գնահատեն բոլոր նրանք, ովքեր ի գորու են զատորոշելու հոգեկանն ու առօրէականը, մնայունն ու անցողիկը, ովքեր գիտակցում են հոգեկան-յաւիտենականի նշանակութիւնը հարազատ ժողովրդի կեանքում:

ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրէն

*There is a moment in our lives,
When all desires are fulfilled.
There is a time when the spirit desires,
When it longs for memories.*

N. Lucinian (19th century)

The reason for our noble Armenian, Alice Navasargian, to undertake this work was the call of memory and especially within her a pulsing of natural love toward art. While she was still a student in the field of philology at the University of Isfahan, she had already met almost all of the Armenian artists in Iran. She had briefly outlined their biographies and described their works, had condensed it into one work, and presented it as her graduate thesis. It was a pleasure for the young author that the first person to encourage her and to edit her work was the then Primate of Iran, and current Catholicos of All Armenians, His Holiness Karekin I.

Years later, after moving to the United States of America, Alice Navasargian lived with the nostalgia of her memories and continued to add and to expand her work. She searched for and found artists who had been born in Iran but had moved out of the country, giving her work an encyclopedic scope. Once one is acquainted with her work, one is attracted not as much by the expanse of the composition, as by the scope and depth of her analysis of the artists. One becomes involuntarily amazed at how obscure and flawed one's imagination had been about the cultural life and especially the lives of the painter-artists who lived in neighboring countries. Even Onnig Avedisian, in his valuable 1959 French language work, "Armenian Artists and Sculptors," cited only a few Armenian artists in the section dedicated to Iran.

In human beings, "Every desire is achieved," occurs perhaps at the summit of one's intellectual life. But occasionally the opposite occurs, when the desire brings forth a new desire, or as Yeghishe Charents wrote, "You see a dream in a dream." The wonderful realization of desires and dreams is achieved thanks to decisive and happy changes in conditions. The sources of Alice Navasargian's new desire was the creative stimulus of Armenia—especially works by the great masters of the brush like H. Hovnatanian, V. Sureniants, M. Saryan, H. Godjoyan, S. Khatchadourian and others.

Towards the end of the 19th century, driven by an inner need, they traveled to Iran and reflected in their works the beauties of that country. By the power of their brushes they penetrated the magical depths of Iranian poetry, a poetry which has been translated many times and has become close to the Armenian soul, suffused throughout magnificent works by Armenian artists. Alice Navasargian came to know all of that in Yerevan's National Gallery of Art, the M. Saryan and H. Godjoyan Museums, which she saw for the first time in 1996. No wonder she again visited Armenia a few months later .

And indeed, Alice Navasargian's work underwent a significant change, adding new colors and becoming a unique commemorative album—in symbolic artistic language—of the Iranian-Armenian tie.

Now, when the cultural and economic ties between Iran and Armenia have been re-established and strengthened, Alice Navasargian's undertaking has gained exceptional value, understood as the first harbinger dedicated to productive spiritual bridges, and also to future works on the subject which are still in their beginning stages.

Of course, it would have been desirable, as the author noted, that the works of the medieval Iranian-Armenian painter Hagop Jughayetsi, Minas (Zohrabian), Hovannes Merkurz, Asdvatzadour (Bogdan) Saltanov who worked for many years in Russia, the artists who decorated the royal palaces, the All Savior's Monastery, and other churches be included in this publication. Mention of them and their works has been missing from other volumes devoted to a history of Armenian art, rendering their works unfamiliar in art-history circles. One must point out that the above-mentioned artists and their works belong to the 17th and 18th centuries, while, as the reader can easily see, the author's natural inclination is toward the new period of Armenian art, which began in the second half of the 19th century.

Aside from this wish, Alice Navasargian's work has completed its intended purpose and is a beginning point for future scholarly studies on Iranian-Armenian art. One must sincerely congratulate the author for closing this accumulated gap in the field. Her accomplishment, which is responsible for the development of a more complete picture of Armenian art history, is no less important for also inspiring others dedicated to publishing comparable works about other Armenian communities.

Those who are able to distinguish between spiritual life and daily life, the permanent from the temporary, and those who are conscious of the significance of the spiritual-eternal in the life of the people, all will love and appreciate this work dedicated by Alice Navasargian to the artists, past and present.

SHAHEN KHATCHATURIAN
Director, National Gallery of Art, Armenia



Նայկական բարձրաանդակից սկիզբ առնող ու դէպի Արևելք հոսող Արաքս գետը, հնագոյն ժամանակներից ի վեր, գծում է Իրանի և Նայաստանի սահմանը: Այդ գետի վրայ ձգած կամուրջները դարեր շարունակ տնտեսական ու մշակութային առնչութիւնների օղակ են եղել երկու ժողովուրդների միջև:

Քսանհինգ հարիւրամեակի ժամանակահատուած են ընդգրկում Իրան-Նայաստան փոխյարաբերութիւնները: Քաղաքական երբեմնի տարաձայնութիւններն ու բախումները, որոնք բնորոշ են ամէն մի երկրի պատմութեանը, լայն առումով չեն խանգարել երկու պետութիւնների և ժողովուրդների բարի դրացիութեանը, որի հիմքը եղել է վստահութիւնը, միմեանց օգտակար լինելու հեռատես միտքը: Արեւմտեան լայնածաւալ ու հզօր տիրապետութեան (6-5 դարեր, Ն.Ք.) և Սասանեան պետութեան (3-7-րդ դարեր, Ք.Ե.) հետ համագործակցութեան ընթացքում է կազմակերպւել հայոց թագաւորութիւնը: Անդրադառնալով այդ ժամանակներին, պատմագէտ-ակադեմիկոս Մորուս Նասրաթեանը գրում է. «Իրանի քաղաքական-իրաւական ու տնտեսական ազդեցութեան երկար ժամանակում էր, որ մշակեց հայկական նիւթական և հոգևոր մշակոյթը, որ հայ ժողովուրդը իր աւագանու և մտաւորականութեան նախաձեռնութեամբ մտաւ քրիստոնէական կրօնի ներքոյ, հետզհետէ նրան տալով իր ազգային՝ զուտ հայկական գոյնը...»: Քիչ աւելի ուշ «Նայաստանը բարձրացրեց աւելի հզօր ազգային դրօշ՝ ստեղծելով սեփական գիրն ու դպրութիւնը: Վերջապէս, Իրանի քաղաքական ազդեցութեան ներքոյ, հայկական մշակոյթն ապրեց այնպիսի վերելք, որպիսին դժար թէ կարողանար ունենալ մի այլ, նոյնիսկ պետականութիւն ունեցող ժողովուրդ: Այդ մեծ թռիչքի ողջ 5-րդ դարը իրաւամբ կոչեց հին հայկական ոսկեդար»: («Նայկագեան Նայագիտական Նանդէս», Բէյրութ, 1979):

Նտազայ դարերում, գրեթէ մի ամբողջ հազարամեակ, Իրանն ու Նայաստանը ունեցան յար և նման պատմական ճակատագիր, որ յատկանշում է կործանիչ հորդանների դէմ յանուն ազատութեան և ինքնուրոյնութեան պահպանման համար մղող հերոսական պայքարով:

Իրանի հետ հետազայ փոխառնչութիւնները, որոնց ալիքները գալիս-հասնում են մինչև մեր օրերը, սկիզբ են առնում 17-րդ հարիւրամեակից: Իրանը Սաֆաւեան դինաստիայի իշխանութեան շրջանում (16-17-րդ դարեր) նշանակալից վերելք է ապրում, վերստեղծում է իր միաս-

The Araks River, which has its source in the high mountains of Armenia and flows towards the East, since ancient times has been the boundary between Iran and Armenia. The bridges built across the river have for centuries provided for economic and cultural ties between the two peoples.

The mutual ties between Iran and Armenia extend over a period of nearly twenty-five centuries. The occasional political disagreements and wars, which are natural in the history of every nation, have not, in a broader sense, disrupted the friendly relations of the two countries and peoples. The basis of that relationship has been trust, and the concept of future helpful relations with each other. Ancient Armenian kingdoms were forged during periods of mutual cooperation with the powerful and widespread Achaemenid Persian Empire (6th-5th c. BC) and the Sasanian Persian Empire (3rd-7th c. AD). Historian-academician Morous Hasratian, reflecting on that period, wrote, "The Iranian political-legal and economic influence had an impact on the moral and material culture of the Armenian people. Under the leadership of its *nakhchars* and intellectuals, Armenian culture was influenced by the Christian religion, gradually giving to the Armenians their unique national identity. A little later, Armenia raised an even more important national flag, creating their own alphabet and learning. Armenian culture prospered and developed so much under the political influence of Iran, that it would be difficult to say whether another people with its own government could have achieved the same. The entire 5th century AD was called the truly classical Armenian golden age." (*Armenian Studies Journal*, Beirut, 1979).

In succeeding centuries, for almost a thousand years, Iran and Armenia shared a similar historic fate, characterized by heroic struggles against destructive hordes, in the name of freedom and national identity.

The next period of relations with Iran, whose influence we feel today, began in the modern period in the 17th century. Iran, in the period of the Safavid Dynasty, 16th-17th century, showed significant development, recreating a unified national state and land. Its ruler Shah Abbas I deported thousands of Armenians across the Araks River into Iran, on the one hand for strategic reasons and on the other hand for economic progress, with an eye to improving economic ties with Europe. Land in the southern part of the capital of Isfahan was apportioned to the Armenians. Foundations for the Armenian city of New Julfa



ԴԻՄԱՆԿԱՐ

Անյայտ նկարիչ

PORTRAIT

Anonymous artist, Iran, 19th century

Oil on glass, 23 x 16cm.

Martiros Sarian Museum, Yerevan

նական պետականութիւնը տարածքային ամբողջականութեամբ հանդերձ: Մի կողմից ռազմական, միւս կողմից տնտեսական բարգաւաճման, Երուսալի հետ առևտրական կապերի աշխուժացման նպատակով Շահ Աբբաս Առաջինը Արաքսի ափերից Իրան է տեղափոխում բազմահազար հայերի: Մայրաքաղաք Իսֆահանի հարաւում նրանց յատկացում են հողատարածութիւններ: 1605-ին դրում են Նոր Ջուղա հայկական քաղաքի հիմքերը: Հայերն ստանում են ամենալայն արտօնութիւններ, որոնց մէջ, ինչպէս նշում է պրոֆեսոր Ա. Հախնազարեանը, «վարչական անկախութիւնը հանդիսացաւ համայնքին ստացած կարևորագոյն առանձնաշնորհումներից մէկը... Նոր Ջուղայի շնորհիւ՝ այս կրօնավարչական ինքնուրոյնութիւնը շուտով այն դարձրեց ամբողջ համայնքի մշակութային ու կրօնական կենտրոն: Թեմակալ առաջնորդարանը իր հովանաւորութիւնը տարածեց Իրանի ութ երկրամասերի մէջ ցրած 64 հայկական գիւղերի, Բասրա և Բաղդատ քաղաքների ու Հնդկաստանի վրայ: Նոր Ջուղայում, արդէն 1630-ից յաջորդաբար հիմնւեցին երկրորդական վարժարաններ, ապա նաև համալսարանը՝ Խաչատուր Կեսարացու կողմից, որ հասցրեց բազմալեզու շրջանաւարտներ, տնտեսագիտական լուրջ պատրաս-

տութեամբ, արժանի՝ յատկապէս միջազգային առևտրի մէջ մասնագիտացած գաղութի մը» («Նոր Ջուղա», Վենետիկ, 1991):

Մի քանի տասնամեակում, Նոր Ջուղան դառնում է ոչ միայն խոշոր առևտրական, այլև զարգացած արհեստատրութեան ու մշակութի կենտրոն: Քաղաքում հիմնում է տպարան. կառուցում է 24 եկեղեցի, այդ թում գլխաւորը՝ Էջմիածնից փոխադրած սրբազան քարեր ու մասունքներ ամփոփող Սուրբ Ամենափրկիչ վանքը:

Իրանահայ գաղութում նկարչութիւնն ունեցել է առանձնայատուկ տեղ: Յատկապէս բեղուն էր մանրանկարչական արեստը, որի աւանդոյթները իրենց հետ բերել էին այստեղ հաստատուած հայերը: Այստեղ է գործել հայկական մանրանկարչութեան վերջին խոշորագոյն դէմքը՝ Յակոբ Ջուղայեցին: Սուրբ Ամենափրկիչ վանքը նկարազարդել են լայն համբաւ վայելած վարպետներ Մինասը (Ջոհրաբեան) և Յովհաննէս Մրքուզը: Առ այսօր էլ ընդհանուր հիացմունք յարուցող նկարչական գոհարներ են ստեղծել Սաֆաւեան շրջանի պալատներում, հայկական եկեղեցիներում ու խոջաների տներում:

Նոյն այս շրջանում և այնուիւետև, Ղաջարի դինաստիայի տիրապետութեան օրօք (18-րդ դարի վերջ, 19-րդ

ՔԱՄԱՆՉԱ ՆԻԱԳՈՂ ՊԱՐՍԿՈՒՏԻՆ
Անյայտ նկարիչ
PERSIAN WOMAN PLAYING KAMANCHA
Anonymous artist, Iran, 19th century
Oil on canvas, 115 x 82cm.
National Gallery of Armenia, Yerevan



were laid in 1605. The Armenians received the widest of privileges, among which, as Professor A. Hakhnazarian has noted, “Administrative autonomy was one of the most important privileges granted to the Armenian community. The religious and secular privileges granted to New Julfa quickly turned it into the cultural and religious center of the entire Iranian-Armenian community. The Diocesan See of New Julfa extended its jurisdiction over eight regions in Iran, encompassing 64 Armenian villages, and also over the cities of Baghdad and Basra in Iraq and in India. After 1930 Khatchatur Kesaretsi consecutively founded secondary schools and a university which graduated multi-lingual students with well-prepared economic backgrounds that involved the community in international economic ties.” (*New Julfa*, Venice, 1991)

Within a few decades New Julfa turned into not only a great commercial center, but also a highly developed artisan and cultural center. A printing press was built as well as twenty-four churches, including the main All Savior’s Monastery, which contained sacred stones and relics brought from Etchmiadzin.

Painting held a special place in the Iranian-Armenian community. The art of miniature painting, whose traditions had

been brought with the Armenians, was especially well developed and fertile. Hagop Jughayetsi, the last of the great miniature painters, lived in New Julfa. The master-painters Minas (Zohrabian) and Hovhannes Mrkuz, who enjoyed great fame, decorated the All Savior’s monastery. In Safavid times, artistic gems—which up to the present day are reasons for awe—were created in palaces, in Armenian churches, and in homes of the wealthy *khodjas* (landowners).

In this period and somewhat later, in the days of the Ghadjar Dynasty, from the late 18th to the beginning of the 19th century, Iranian painting bore a distinctive European influence. The appellation, “Ghadjar style,” was based on the ruling family’s name. Examples of Italian and French painting entered Iran. In painting, the principal genre became that of the official portrait. Imitating the Europeans, Iranian painters worked in oils, creating huge canvases, and adopting stylistic principles of European art: the development of color surfaces and sizes, the emphasis on perspective, etc. But the Iranian masters remained true to the old national art, especially to manuscript decoration, which was uniquely beautiful in world



ՊԱՐՍԿՈՒՏԻՆ ԹԱՐՈՎ

Անյայտ նկարիչ, Իրան

PERSIAN WOMAN WITH TAR

Anonymous Artist, 19th century

Oil on canvas, 116 x 83cm.

National Gallery of Armenia, Yerevan

դարի սկիզբ), իրանական նկարչութիւնը կրում է կրոպական նկարչութեան որոշակի ազդեցութիւնը («Ղաջարի ոճ» բնութագրումը պայմանական է, առաջացել է ղեկավարող գերդաստանի անունից): Իրան են մուտք գործում իտալական, ֆրանսիական նկարչութեան նմուշներ: Նկարչութեան մէջ, իբրև առաջատար ժանր, գերիշխող է դառնում պաշտօնական դիմանկարը: Հետևելով կրոպացիներին, իրանցի նկարիչներն աշխատում են իդաներկով, ստեղծում խոշոր չափի կտաւներ, օգտագործում արևմտեան արւեստին յատուկ ոճաձևական սկզբունքներ գունային մակերեսների ու ծաալների մշակում, հեռանկարի շեշտում կային: Դրանով հանդերձ, սակայն, իրանցի վարպետները հաատարիս են մնում հայրենի հին արւեստին, մասնատրապէս համամարդկային մշակոյթի մէջ իր գեղեցկութեամբ եզակի՝ գրքային նկարչութեանը: Այդ արւեստին բնորոշ գծանկարի նրբութիւնը, յտակոյթիւնը, գոյնի մաքրութիւնը ու դրանց հետ մէկտեղող խոր քնարականութիւնը էական առանձնայատկութիւնն են դառնում նաև 18-19 դարերի իրանական նկարչութեան համար:

Նոյն երևոյթը կարելի է դիտել նաև Նոր Զուղայի հայ նկարիչների մօտ: Նախ՝ մօտիկից շփելով իրանական արւեստին, ապա ծանօթանալով նաև կրոպական

նկարչութեանը, իրենց կրօնական թեմաներով գործերում նրանք ևս կարևորել են ազգային արւեստի դիմագծի առանձնայատկութիւնների պահպանումը: Այս հանգամանքի շնորհիւ էլ նրանց արւեստը ընկալւում է իբրև միջանկեալ մի օղակ հայկական միջնադարեան արւեստի աւանդոյթների ու նոր շրջանի մշակոյթի ստեղծագործական ձգտումների միջև:

19-րդ դար: Երոպայում ակադեմիզմի դէմ պայքարում յաղթանակած ռոմանտիզմը յեղաշրջում է կատարում կերպարւեստի զարգացման մէջ: Առաջ են մղում յուզականն ու զգացմունքայինը՝ իբրև ստեղծագործական որոշիչ գործօն: Վերանայում են պատկերի կառուցման դասական սկզբունքները: Հնչեղ գոյնն ու անկաշկանդ գծանկարը յայտնւում են յուզաթրթիռ արտայայտչութեամբ, դառնալով մարդկային անմիջական ապրումների թարգման: Զարմանալի չէ, որ ռոմանտիկական արւեստի հետևորդները նոր կողմերով են յայտնագործում Արևելքը, արևելեան արւեստի մէջ որոնում նոր խօսքի հոգեկան ակունքներ: Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի ինքնատիպ ու խորհրդաւոր մշակոյթը դառնում է համընդհանուր հետաքրքրութեան ու ուսումնասիրման առարկայ:

ԿԱՊՈՅՑ ՇՐՋԱԶԳԵՍՏՈՎ ԿԻՆԸ
Անյայտ հայ նկարիչ
THE WOMAN IN BLUE
Anonymous armenian artist
Oil on canvas, 62 x 45cm.
National Gallery of Armenia, Yerevan



culture. The natural subtlety of line, clear and pure colors, and deep lyricism were essential characteristics of that art and also for Iranian art of the 18th to 19th centuries.

The same phenomenon could also be observed with the painters of New Julfa. Coming into close contact with Iranian art first, and then becoming familiar with European styles of painting, they gave importance to the national art style and maintained its unique characteristics in their works of a religious nature. Thanks to these circumstances, their art was seen as a connecting bridge between the traditions of medieval Armenian art and the creative tendencies of the modern cultural period.

In 19th-century Europe, in the successful struggle of romanticism against academics, development of the art of portraiture underwent a revolution. The emotional and the impressionistic were thrust forward as the determining factors in art. Classical principles of the construction of the painting were reconsidered. Resounding colors and unrestrained drawings took on an agitated expression, becoming the reflection on man's interior life. It is not surprising that followers of the romantic art movement expressed new facets of the East, seeking new spiritual sources in Eastern art. The original and mys-

terious cultures of Japan, China, India, and Iran became subjects of general interest and study.

Literature, architecture and painting as well as the popular applied arts and legends of the Orient, were presented in Europe as a world of rich imagination, unusual beauty, and unending charm.

The waves of that "storm" reached Armenia too. And the Armenian people, for whom the creative and spiritual life had always had a life-affirming meaning, turned its attention first to Iran, so near and familiar. The cultural ties between the two countries became based on new foundations and received new content.

With their spiritual treasure-house *hairens*, the Armeian people were seen as spiritually near to the poetic world of the great Omar Khayyam, Hafez, Firdusi, Nizami, and Saadi. In the field of music, first Sayat Nova, and then the late 19th century composers Nigoghayos Tigranian and Alexander Spendiarian were the first, who reflecting on the popular music of the Iranian people, enriched it with new subtleties of color, in distinctive Armenian style. In the final decades of the 19th century, the Armenian painters Hagop Hovnatanian, Vartges Sureniants, Martiros Saryan, Hagop Kodjoyan, consecutively,



ՆԱԹԱԼԻԱ ԹԵՄԻԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Յակոբ Յովնաթանեան

PORTRAIT OF NATALIA TEUMIAN

Hagop Hovnatanian

Oil on canvas, 1840s, 35 x 28cm.

National Gallery of Armenia, Yerevan

Արևելքի երկրների գրականությունն ու բանաստեղծությունը, ճարտարապետությունն ու նկարչությունը, ինչպես և ժողովրդական կիրառական արվեստն ու լեգենդները, Եւրոպային ներկայանում են իբրև հարուստ երևակայության, իրօրինակ գեղեցկության ու անսպառ գնայլանքի աշխարհ:

Այդ մեծ «փոթորկի» ալիքները հասնում են նաև Հայաստան: Եւ հայ ժողովուրդը, որի համար ստեղծագործական, հոգևոր կեանքը միշտ ունեցել է կենսահաստատման իմաստ, հետաքրքրությունների իր առաջին հայեացքն ուղղում է դէպի սօտիկ ու ծանօթ Իրան: Մշակութային կապերը հարևան երկրի հետ դրում են նոր հիմքի վրայ, ստանում նոր բովանդակություն:

Միջնադարում իր հոգու գանձարանները «հայրեններով» բացայայտող հայ ժողովուրդը այնքան հոգեհարազատ է ընկալում մեծն Օսմար Խայեամի, Հաֆէզի, Ֆերդոսու, Նէզամիի, Սաադիի բանաստեղծական աշխարհը: Երաժշտության բնագաւառում նախ Սայաթ-Նովան, իսկ 19-րդ դարի վերջերում կոմպոզիտորներ Նիկողայոս Տիգրանեանն ու Ալեքսանդր Սպենդիարեանը առաջինները եղան, որ անդրադարձան իրանեան ժողովրդական մելոսին: Հարստացրին այն նոր

գուներանգներով, հայկական շնչով: Դարի վերջին տասնամեակներից հայ նկարիչներ Յակոբ Յովնաթանեանը, Վարդգէս Սուրէնեանցը, Մարտիրոս Սարեանը, Յակոբ Կոջոյեանը յաջորդաբար յայտնուեցին դրացի երկրում: Նրանց կտաւներում արտացոլեցին Իրանի բնաշխարհի գեղեցկություններն ու ժողովրդի կենցաղը: Սկսեցին հաւաքել և հետազայում Հայաստանի թանգարանների զարդը դարձան իրանեան մշակոյթի նմուշները, որոնցից ընտրւած մի շարք նկարչական երկեր անհրաժեշտ գտանք գետեղել այս հատորում:

Այսպէս սկսեց նոր էջ դրել Իրան-Հայաստան մշակութային առնչությունների մէջ, որին ցաւօք, վիճակած չէր բնականոն շարունակություն ստանալ ներկայ դարում:

Բայց այսօրինակ անբնական վիճակը չէր կարող յարատեւել: Իր անկախութիւնը նաճած Հայաստանը դրսի հետ կապող առաջին կամուրջը կառուցեց հէնց Իրանի հետ, Արաքսի ջրերի վրայով: Յիրափ, դժար է գտնել հին կապերի վերահաստատման և նոր արգասատոր բարեկամութեան հեռանկարներ խոստացող մէկ այլ առաւել վառ խորհրդանիշ:

Հայ նկարիչներից առաջինը, որը 1870-ականներին մեկնեց Թարիզ, ու ապրեց Իրանում մինչև կեանքի վերջը, դիմանկարիչ Յակոբ Յովնաթանեանն էր (1806-1881):

ԱՆԱՆԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Յակոբ Յովնատանեան
PORTRAIT OF ANANIAN
Hagop Hovnatanian
Oil on canvas, 1840s, 34 x 27cm.
National Gallery of Armenia, Yerevan



ՅԱԿՈԲ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ
1806-1881
HAGOP HOVNATANIAN

became well known in the neighboring country. In their canvases they depicted the natural beauty of Iran and the worldview of its people. These examples of Iranian cultural art began to be collected and later became the adornments of Armenian museums. We felt it necessary to place some selected examples of these in this volume.

In this way a new page was written of the cultural tie between Iran and Armenia, which, unfortunately, was not able to see its natural continuation in the last decades of this century.

But this unnatural condition could not continue for long. Armenia attained its independence and built its first bridge to the outside world with Iran, over the waters of the Araks River. Indeed, it would be difficult to find a more living symbol of the re-establishment of ancient ties and the promise of future fruitful friendship.

Portrait painter Hagop Hovnatanian (1806-1881) was the first of the Armenian painters, who in the 1870s, were sent to Tabriz and lived for the rest of his life in Iran.

This great master of 19th century Armenia art was a member of the famous Hovnatanian family, which produced six generations of painters over a two-hundred-year-period. The



ԻՐԱՆՑԻ ԴԱՐՎԻՇԸ ԹԵՏՐԱՆԻՑ

Յարութին Շամշինեան

IRANIAN DARVISH FROM TEHRAN

Haroutiun Shamshinian

Oil on canvas, 1898, 17 x 12cm.

National Gallery of Armenia, Yerevan


19-րդ դարի հայկական գեղանկարչութեան այս խոշորագոյն վարպետը պատկանում է Յովնաթանեանների նշանաւոր ընտանիքին: Երկու հարիւրամեակի ընթացքում այդ ընտանիքը տւել է նկարիչների վեց սերունդ: Նոր Ջուղայեցիներին զուգահեռ, իբրև ազգային նկարչութեան հին ու նոր շրջանները կապող օղակ, անգնահատելի է նրանց դերը հայ մշակոյթի պատմութեան մէջ: Ընտանիքի սկզբնաւորողը եղել է յայտնի բանաստեղծ ու նկարիչ, Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների առաջին հեղինակ (գործը շարունակւել է որդու և թոռների կողմից) Նաղաշ Յովնաթանը (1666-1722): Յակոբը Նաղաշի թոռան թոռն է, գերդաստանի վերջին ներկայացուցիչը:

Յակոբ Յովնաթանեանը ծնւել է Թիֆլիսում, մասնագիտական գիտելիքներ ձեռք բերել հօրից, եկեղեցական նկարիչ Մկրտումից: Այդ շրջանում, Անդրկովկասի կենտրոնի՝ բազմազգ Թիֆլիսի բնակչութեան զգալի տոկոսը կազմում էին հայերը: «Ում դիմանկար էր պէտք, — վկայում է ժամանակի սամուլը, — վազում էր Յովնաթանեանի մօտ, նա յաջողութեամբ բաւարարում էր բոլոր պահանջները»: Այսպիսով Յովնաթանեանը դիմանկարների բազում պատկերներ է ստացել, նկարել յատկապէս ունևոր խաւի անձանց, հարուստների կանանց ու զաւակներին: Այսօր

նրա ժառանգութեան փոքր մասն է միայն պահպանւել, շուրջ 40 գործ, որոնք խնամքով հաւաքւել ու ցուցադրում են Նայաստանի Ազգային պատկերասրահի առանձին դահլիճում:

Յովնաթանեանի դիմանկարների առջև դիտողն ակամայ համակում է տարօրինակ լուսութեան ու խորհրդատրութեան զգացումով: «Յովնաթանեանի գործերը ուշադիր դիտելիս, — գրում է արւեստաբան Շ. Խաչատրեանը, — թոււմ է, թէ պատուերի կատարումը՝ մարդու դէմքն ու արդուզարդը նման նկարելու խնդիրը, ամէն անգամ երջանիկ առիթ է ընձեռել նկարչին ընկնելու իր բուն տարերքի մէջ, դրսևորելու իր վերաբերմունքը բնութեան ու նիւթական աշխարհի ամէն մի իրի հանդէպ, ներկայացնել այն ոսկերչական նրբութեամբ, բիրտղացած, բանաստեղծականացած: Արւեստագէտին հետաքրքրում են ոչ այնքան մարդու հոգեբանական գծերը, որքան ինքը՝ մարդը: Եւ նա միշտ ուշադրութեան կենտրոնում է պահում մարդկանց դէմքերն ու ձեռքերը ու առանձնապէս՝ ասես իրենք իրենց նայող ու յակինթների պէս փայլող աչքերը: Այն, ինչին հպում է Յովնաթանեանի վրձինը, պէտք է գոյնով ու ձևով հնչի մաքուր, թափանցիկ, դառնայ ներքին տեսողութեան արտացոլում, դառնայ գեղանկարչական

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԱՆ ՃԱԿԱՏ
 Վարդգես Սուրենյանց
 FACADE OF PERSIAN HOUSE
 Vartkes Soureniants
 Oil on canvas, 1884, 37 x 28cm.
 National Gallery of Armenia, Yerevan



role of the Hovnatanian family in Armenian cultural history, along with the artists of New Julfa, is invaluable as an example of the link between the ancient and modern periods of Armenian art. The founder of the family dynasty was famous poet and artist Naghash Hovnatan (1666-1722), the first to create the frescoes inside the Cathedral of Holy Etchmiadzin, a job which was continued by his son and grandson. The last representative of the family was his great-great grandson Hagop Hovnatanian.

Hagop Hovnatanian, born in Tiflis, was trained in art by his father Mgrdum, who painted churches. At that time, a sizeable number of Armenians lived in the cosmopolitan city of Tiflis, then the center of the Transcaucasus. "Whoever wants their portrait painted runs to Hovnatanian, and he successfully fulfills everyone's needs," testified the contemporary press. Thus, Hovnatanian was commissioned to paint numerous portraits, especially of the rich upper class and their wives and children. Only a small portion of this legacy, about 40 works, have been carefully preserved and exhibited in a special gallery in the National Gallery of Art in Yerevan, Armenia.

In front of a Hovnatanian portrait, one involuntarily falls into an unusual silence and feels the mystery of the work. Art



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՄՇԻՆԵԱՆ
 1856-1914
 HAROUTIUN SHAMSHINIAN



ՑԱՅԳԵՐԳ

Վարդգես Սուրենյանց

SERENADE

Vartkes Soureniants,

Oil on canvas, 1885, 48 x 40cm.

National Gallery of Armenia, Yerevan

գոհար: Այս է եղել նկարչի արարման հաւատամքը» (Յ. Յովնաթանեան, Երևան, 1989):

Սոյն հրատարակութեան մէջ Յովնաթանեանի կանացի դիմանկարներից մէկի հարևանութեամբ ներկայացած է նաև նոյն շրջանում ստեղծած իրանական նկարչութեանը բնորոշ մի նմուշ: Ջարդային, դեկորատիւ տարրերի հանդէպ Յովնաթանեանի սերը վկայում է նրա որոշակի կապը արևելեան մշակոյթի հետ (սխալ չենք լինի, երբ ասենք, որ հայ արեստի հասար Արևելք՝ հիմնականում նշանակել է Իրան): Միւս կողմից, զգացում է նաև Յովնաթանեանի իրապաշտական, մասամբ ռոմանտիկական երանգ ունեցող արեստի կապը իր ժամանակի կրոնական և ռուսական դիմանկարչութեանը: Սակայն, նշւած առնչութիւնները կամ նմանութիւնը սոսկ արտաքին բնոյթ են կրում:

Յովնաթանեանի նկարելաեղանակը, ինչպէս իր մեծ նախնիների մօտ, հարթապատկերային է: Գոյները հնչեղ են, մաքուր, նիւթական և չեն ենթարկում հեռանկարի օրէնքներին: Չնայած իրենց դեկորատիւ հնչողութեանը, գոյներն օգնում են բնորդի ներաշխարհի բացայայտմանը: Նատալիա Թէումեանի դիմանկարում, օրինակ, մուգ կանաչի, սպիտակի, վարդագոյնի ու նուրբ գծանկարի

ներդաշնակումով նկարիչն ստեղծել է երաժշտական, բանաստեղծական մի կերպար: Յովնաթանեանի գործերում գունային մակերեսների հաւասարակշռութիւնը, ձևերի պարզութիւնն ու զսպութիւնը նկարչի փոքրաչափ դիմանկարներն օժտում են խոր արտայայտութեամբ, հաղորդում նրանց ներամիոփ, վեհաշուք հնչողութիւն:

Յովնաթանեանի գեղանկարչական ստաժելակերպի ու լեզւի բուն ակունքը հայկական միջնադարեան արեստն է: Իր ինքնատիպ ստեղծագործութեամբ նա տրամաբանական աւարտի հասցրեց նախորդների աւանդոյթները և դարձաւ հայ արեստի նոր շրջանի առաջին մեծ նկարիչը:

Երբ Թիֆլիսում յայտնուում է լուսանկարչութիւնը, Յովնաթանեանը սկսում է մոռացութեան տրել: Նա մեկնում է Իրան, որ և վախճանում է: Թարիզում և Թեհրանում ստեղծած գործերի շարքում իրենց բնոյթով ու բովանդակութեամբ առանձնանում են Շահ Նասր-էդ-Դինի ձուլվայ նստած և նրա որդու՝ Մուգաֆար-էդ-Դինի դիմանկարները (ցաւօք, այդ գործերի լուսանկարները չենք կարողացել հայթայթել):

Նկարչութեան պատմութեան մէջ իբրև բացառիկ երևոյթ Յովնաթանեանը «յայտնագործեց» իր մահից շատ ուշ, մեր դարի քսանական թականներին: Նրա ժառանգութիւնը,

ՓԱՆՈՒԻՍ ՆԱՐԵՍԻՑ
Վարդգես Սուրենյանց

ESCAPE FROM HAREM
Vartkes Soureniants

Oil on canvas, 1889, 120 x 44.5cm.
National Gallery of Armenia, Yerevan



ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ
1860-1921
VARTKES SOURENIANTS

critic Shahen Khatchatrian has written, "Looking carefully at Hovnatanian's paintings, it seems that the commission has been fulfilled; the portrait of the man and the subject of his painting, is always a happy occasion for the painter to create in his true element, to express his action towards nature and the material world and to every object, depicting that golden subtlety, crystallized and turned into a lyrical poem. The artist is interested not so much in man's psychological situation but rather in him, the man. And concentrated attention is always drawn to the face and the hands and particularly on the twinkling eyes which seem to look inward on themselves. Everything which the artist's brush touches should resound in color and form, penetrating, embodying his inner vision, becoming a painterly pearl. This was the artist's creative credo." (*H. Hovnatanian, Yerevan, 1989*)

In this publication, one of Hovnatanian's portraits of a woman resembles an example of Iranian art produced in the same period. Hovnatanian's love of colorful ornamentation and decorative elements demonstrates his strong ties with Eastern culture. It would not be incorrect to say, that for Armenian art, Eastern means primarily Iran. On the other hand, one can also feel in his art a connection with realism and some of the roman-



ինչպես և նոյն ժամանակաշրջանի Իրանի «Ղաջարի» դպրոցի ազգային շնչով տոգորած նկարչական գլուխ գործոցները, համամարդկային մշակույթի նաճումներից են:

19-րդ դարի կեսերից հայկական նկարչության զարգացումն ընթացաւ նոր ուղիով: Այդ ուղին յատկանշում է սերտ մերձեցմամբ կրոնական և ռուսական արւեստների հետ: Արւեստի նփրեալ հայ երիտասարդները, ինչպէս ժամանակին նոր ջողայեցիք, մեկնեցին Երուսա, մասնագիտական կրթութիւն ձեռք բերելով Պետերբուրգի, Փարիզի, Միւնխենի ու այլ ակադեմիաներում: Բնականաբար, ազգային արւեստ ներբերեցին պատկերման նոր, կրոնական եղանակներ, որոնք, հետզհետէ հայրենի երկրի ու միջավայրի առանձնայատկութիւններին մերելով, անշուշտ, պիտի ստանային տեղային նկարագիր, ազգայինին բերէին մի նոր որակ: Այդ գործընթացը, որ յատուկ է նաև ուրիշ երկրների մշակույթին, շարունակեց մինչև մեր դարասկիզբը:

Նշւած շրջանի հայ նկարիչներից համաշխարհային համբաւ է ձեռք բերում Յովհաննէս Այվազովսկին (1817-1900): Ծովային տարերքի չգերազանցած այս երգչի

ՖԵՐԴԱՍԻՆ ԿԱՐԴՈՒՄ Է ՇԱՏՆԱՄԷՆ
ՇԱՏ ՄԱՏՄՈՒԴ ԴԱԶՆԱՄԻՒՆ, Վարդգէս Սուրէնեանց
FIRDAUSI READS THE POEM *SHAHNAMEH*
TO SHAH MAHMOUD GHAZNAVI, Vartkes Soureniants
Oil on canvas, 1913, 138 x 162cm.
National Gallery of Armenia, Yerevan

արւեստը (նա ստեղծել է շուրջ 6000 ծովանկար, այդ թում և հայկական թեմաներով տասնեակ կտաւներ), ինչպէս և նրա հայրենասէր քաղաքացու էութիւնը մեծ չափով նպաստել է առհասարակ գեղանկարչութեան զարգացմանը: Ղրիմում, իր ծննդավայր Թէոդոսիա քաղաքում, ծովափին կառուցած նրա տուն-թանգարանը ուխտատեղի է եղել հայ մշակույթի բազմաթիւ գործիչների համար: Նա է սկզբնաւորել հայկական ծովանկարչութեան դպրոցը՝ Գ. Բաշինջաղեան, Վ. Մախոխեան, Է. Մահդեսեան, Մ. Զիվանեան, Կ. Ադամեան, Զ. Մուքաֆեան, Ն. Մինասեան (վերջինս գործում է Իրանում) և ուրիշներ: Պատանի հասակում Այվազովսկու մօտ է մկրտութիւն ստացել նաև մեծատաղանդ նկարիչ Վարդգէս Սուրէնեանցը, որի ստեղծագործութիւնը շատ թելերով կապել է Իրանի հետ:

Նախքան վերջինիս երկերին անդրադառնալը հարկ է յիշատակել Յարութիւն Շամշինեանին (1856-1914): Նա ուսանել է Պետերբուրգի գեղարւեստի ակադեմիայում:

ՖԵՐԴԱՍԻՆ ԿԱՐԴՈՒՄ Է
ՇԱՆՆԱՄԷՆ ՇԱՏ
ՄԱՏՆՈՒԴ ԴԱԶՆԱԻԻՆ
Վարդգես Սուրենյանց

FIRDAUSI READS THE POEM
SHAHNAMEH TO SHAH
MAHMOUD GHAZNAVI
Vartkes Soureniants
Detail



tic elements of contemporary Russian and European art. But those comparisons and similarities only have an external nature.

Hovnatanian's main style, similar to his great predecessors, is the expanse of colors. The colors breathe, they are clean and not subject to the principles of perspective. Aside from their decorative aspects, the colors aid in the discovery of the inner world. In the portrait of Natalya Teumyan, for example, with the use of dark green, white, and pink and in the delicate harmony of the painting, he has created a musical, poetic portrait. There is a balance of color, simplicity of form, and restraint in Hovnatanian's works, which have given his small-sized paintings a deep expressive quality, communicating their compact and majestic qualities.

The main sources of Hovnatanian's artistic style, pictorial language, and world-view, was Armenian medieval art. With his original creations he logically brought to a close the traditions of previous generations and became the first great painter of the modern period of Armenian art.

When photography became popular in Tiflis, Hovnatanian began to be ignored. He left for Iran where he died. Among the series of paintings created in Tabriz and Tehran, the portraits of Shah Nasr-ed-din seated on a horse and of his son

Muzafar-ed-Dini, are distinguished from the rest in terms of content and style. Unfortunately, we were not able to provide photographs of those paintings in this album.

It was in the 1920's, much after his death, that Hovnatanian was "discovered" as an exceptional figure in the history of art. His legacy, as well as the masterpieces of the Iranian "Ghadjar" school of art created in the same period, are a part of the cultural achievements of mankind.

In the second half of the 19th century, the development of Armenian art continued along a different path characterized by a close relationship with European and Russian art. The young generation of Armenian artists, for example the artists of New Julfa, left for Europe, to be trained in art education in St. Petersburg, Paris, Munich and in other cities. Naturally, they introduced new, European influences to Armenian painting, combining them with the unique characteristics of Armenian art, bringing a new quality to it. That process, which also took place in other cultures, continued until the beginning of the twentieth century.



ՖԵՐԴՈՍԻՆ ԵՒ ՇԱՀ
ՄԱՀՄՈՒԴ ԴԱԶՆԱՎԻՆ
Վարդգես Սուրենյանց
FIRDAUSI AND SHAH
MAHMOUD GHAZNAVI
Vartkes Soureniants
Gouache on paper
1913, 29.5 x 29.5cm.
National Gallery of Armenia
Yerevan

Յետոյ ճամբորդել է կրոպական երկրներ, ապա հաստատել ծննդավայր Թիֆլիսում, ուր ստեղծագործելուն զուգընթաց զբաղել է մանկավարժական գործունեությամբ: Շամշինեանը սիրել է պատկերել կովկասեան բնութիւնը, Թիֆլիսի կենցաղն ու տարբեր ազգերի մարդկանց տիպարներ: Իր դիմանկարների շարքում, վարպետ կատարումով աչքի է ընկնում «Իրանցի Դերվիշը»: Բնորդի հայեացքը խոհուն է, աչքերի արտայայտութիւնը խորաթափանց: Ակնյայտ է, որ դերվիշ բարեկամին տպաւորիչ պատկերելով, Շամշինեանն իր ջերմ վերաբերմունքն է դրսևորել նրա երկրի հանդէպ, ուր, սակայն, նկարչին չի յաջողել լինել:

Վարդգես Սուրենյանցի (1860-1921) ստեղծագործական ժառանգութեան այն էջերը, որոնք նւիրած են Իրանին, անգնահատելի աւանդ են երկու երկրների մշակութային կապերի մէջ:

Սուրենյանցը ծնել է Վրաստանի Ախալցխա քաղաքում, հոգևորականի ընտանիքում: Ստացել է բազմակողմանի կրթութիւն, տիրապետել մի շարք լեզուների: Մոսկուայի գեղարեստական ուսումնարանն աւարտել է

որպէս ճարտարապետ, այնուհետև գեղանկարչութեան կրթութիւն է ստացել Միւնխենի ակադեմիայում: Սուրենյանցը կատարել է թատերական ձևաւորումներ, գրքերի նկարազարդումներ, որմնանկարներ ստեղծել Եալթայի հայկական եկեղեցում (ընդ որում, օրինակ ունենալով Էջմիածնի Յովնաթանեանական զարդաբնոյթ որմնանկարները): Սակայն հայկական արւեստում նա առաւելապէս ճանաչւած է որպէս պատմական նկարչութեան հիմնադիր: 1895-ին հայ ժողովրդի ապրած ողբերգութեան տպաւորութիւններով նրա ստեղծած պատմական խոշոր կտաւները («Նոյսի մեծ Վանքը», «Ռոմահարած Սրբութիւն», «Շամիրամը Արա Գեղեցիկի Դիակի Մօտ»), իրենց խոր գաղափարայնութեամբ ու իրատիպ մարմնատրմամբ ցարդ մնում են անգերազանցելի:

1885-ին մոսկուացի ազգագրագետների մի խմբի կազմում Սուրենյանցը երկու տարով ուղևորում է Իրան: Այստեղ նա յափշտակւում է հինաւուրց երկրի ճարտարապետութեամբ, զարդա-դեկորատիւ արւեստով: Նկարում է տասնեակ էտիւդներ, որոնք հետագայում ցուցադրում է Պետերբուրգում: Այդ շրջանի «Սերենադ» և «Փախուստ Նարեմից» պատկերների մէջ, որոնք

ՖԵՐՊՈՍԻ
«ՌՈՍՏԱՄ ԵՒ
ԶՈՂՐԱԲ»
ՊՈԵՄԻ
ՆԿԱՐԱԶԱՐՊՈՒՄ
Վարդգէս
Սուրենեանց

ILLUSTRATION
FOR FIRDAUSI'S
"ROSTAM AND
ZOHRAH"

Vartkes Sureniantz
Gouache, ink on paper,
1914, 29.6 x 30.5cm.
National Gallery of
Armenia, Yerevan



Of the Armenian painters of that period, Hovhannes Aivazovski (1817-1900) gained international attention and fame. Aivazovski, who was unsurpassed in his art which was devoted to the depiction of the elements of the sea, created more than 6,000 paintings of seascapes. Included also are dozens of paintings with Armenian themes, in general contributing much to the development of Armenian painting. His home-museum along the shores of the Black Sea, in his hometown of Teodosia, in the Crimea, has become a pilgrimage site for many who have worked for the advancement of Armenian culture. He founded the school of Armenian art devoted to the sea, which included Gevork Bashindjagian, V. Makhokhian, H. Mahdesian, M. Jivanian, K. Adamian, Z. Mutafian and H. Minasian, the latter who worked in Iran, and others. The highly talented painter Vartges Sureniantz, whose work is tied in many ways to Iran, was "baptized" at an early age by Aivazovski.

Before discussing Sureniantz' work, it is necessary to remember Haroutiun Shamshinian (1856-1914). He studied at the Academy of Fine Arts in St. Petersburg. He then traveled throughout Europe, finally establishing himself in his birth-

place of Tiflis, where along with his painting he also worked as a teacher. Shamshinian loved to depict Caucasian nature, the life-style in Tiflis, and characters from different nationalities. In his series of portraits, "The Iranian Dervish" is especially masterfully executed. The model's gaze is deep and the expression of the eyes penetrating. It is clear, that by impressively depicting the Dervish, Shamshinian expressed his warm attitude toward Iran, which he never never had the chance to visit.

The artistic legacy of Vartges Sureniantz (1860-1921) devoted to Iran, is an invaluable body of work in the cultural links of the two countries.

Sureniantz, the son of a priest, was born in of Akhaltskha, Georgia. He received a multi-faceted education and mastered several languages. He graduated from the Moscow Academy of Art as an architect, and then went on to receive an education in art at the Munich Academy of Arts. Sureniantz worked on theater design and book illustrations, and created frescoes in the Armenian Church of Yalta, executed in a style similar to the frescoes done by Hovnatanian in Etchmiadzin. However, he is best known in Armenian art as the founder of the school



ՆԱՐԵՄՈՒՄ
 Վարդգես Սուրենյանց
 IN THE HAREM
 Vartkes Soureniants
 Oil on canvas, 1918, 91 x 79cm.
 National Gallery of Armenia, Yerevan

ներթափանցած են ռոմանտիկ տրամադրությամբ, զգացում են անմահ «Շահրեզադէի» արձագանքները:

Իրանի մշակոյթով ներշնչած արեստագէտը հարուստ նիւթ է հաւաքում հետագայ աշխատանքների համար: Բացի այդ, նա հետաքրքրում է Իրանի կառավարութեան կողմից դիւանագէտի պաշտօն ստանձնած, Շեքսպիրի ողբերգութիւնների համբաւուր թարգմանիչ Յովհաննէս Մասեհեանի գրական գործունէութեամբ և նրա օրինակով իրականացնում մեծ անգլիացու «Փոթորիկ» թատերգութեան սքանչելի թարգմանութիւնը:

Տասը տարի անց Սուրենեանցը Մոսկուայում ցուցադրում է Արևելքին նւիրած իր առաջին՝ «Պատանի Նաֆէզը Մուսելի վարդերն է գովերգում երիտասարդ շիրագուտիներին» մեծադիր կտաւը: Ցաւօք, առ այսօր պարզաւոր չէ այդ ստեղծագործութեան ուր գտնւելը: Ռուս նշանաւոր մտաւորականներ՝ նկարիչ Ի. Ռեպինի և գեղարեստագէտ Վ. Ստասովի դրատական տպագիր կարծիքներից կարելի է եզրակացնել, որ այդ նկարն օժտած է եղել բարձր արժանիքներով:

Երբ մտնում ես Նայաստանի ազգային պատկերասրահում Վ. Սուրենեանցին յատկացած դահլիճը, քեզ անմիջապէս գրատւ է Արևելքի կախարհիչ գեղեցկութեան դրոշմը կրող մի պատկեր՝ «Ֆերդոսին կարդում է Շահնամէ պոէմը Շահ Մահմուդ Ղազնաւիին» (1913): Դիտում ես

նկարը և թւում է, թէ նախ պիտի տեսնես հանճարեղ բանաստեղծին, նրա դէմքը, մինչդեռ նա պատկերւած է մէջքի կողմից նկարի առջևի մասում: Շուտով պարզ է դառնում հեղինակի մտայնացումը: Ֆերդոսու «Շահնամէն» ինքը բովանդակ Իրանն է, իրանական շքեղակերտ երկիրը: Պատկերի մէջ ամէն ինչ՝ Շահը, նրա գահը, թիկնապահները, նուշ մատուցող պատանին, նոյնիսկ Շահի ոտքերի տակ մեկնւած յովազը, գտնւում են պոէմի մոգական ազդեցութեան ներքոյ: Շնորհիւ նկարի ընդհանուր դեղնականաչ կոլորիտին, գարդային շքեղութեանը ներդաշնակ նկարելառճի, մարդիկ ու շրջապատող առարկաներն ընկալւում են միասնական ամբողջութեամբ: Այն տպաւորութիւնն է ստեղծում կարծես աչքերիդ առջև երկրի ոգին խտացնող, նրա խորհրդանիշը մարմնատրոյ գորգ է փռւած...

Արևելքի մշակոյթի հանդէպ նկարչի սէրը թափանցում է նրա իրանական շարքի բոլոր գործերից, ինչպէս նաև գրքերի նկարազարդումներից, անսպառ հիացում պատճառելով դիտողին:

Իրանի մեծարեստ մանրանկարչութեան նկատմամբ երկրպագումն է բնորոշ Յովակիմ Միզանաջեանի (1883-19..) արեստին: Ոչ այնքան յայտնի այս նկարչի կեանքն անցել է Մոսկուայում: Նկարների մեծ մասը



ՊԱՐՈՒՏԻ

Յովակիմ Միգանաջեան

DANCER

Hovakim Miganajian, oil on canvas, 1913, 42 x 55 cm.

National Gallery of Armenia, Yerevan



ՅՈՎԱԿԻՄ ՄԻԳԱՆԱՋԵԱՆ

1883-19..

HOVAKIM MIGANAJIAN

of historical painting. With his depictions of the Armenian massacres of 1895, especially in his series of huge canvases: "The Monastery of St. Hripsime," "The Trampled Sanctuary," and "Semiramis With the Corpse of Ara the Magnificent," have remained unsurpassed to this day for their complex ideology and original conception.

In 1895, as part of a group of Russian ethnographers, Sureniants traveled throughout Iran for two years. He was enraptured by the ancient architecture of the land and the ornamental decorative art of Iran. He painted dozens of studies, which he later exhibited in St. Petersburg. In that period, the echoes of the immortal "Scheherazade" were felt in the paintings "Serenade" and "Escape From the Harem," which were executed in a thoroughly romantic style.

The artist, inspired by Iranian culture, collected rich materials for his future works. Besides that, he became interested in the literary work of the famous translator of Shakespeare's tragedies Hovhannes Masehian, who had received official diplomatic status from the Iranian government. Following his example, he succeeded in translating the famous playwright's "The Tempest."

Ten year later, Sureniants exhibited a large canvas in Moscow devoted to the Orient called, "The Young Hafez Praises the Roses of Musel to the Beautiful, Youthful, Ladies of



ՊԱՐՍԿՈՒՏԻ
 Մարտիրոս Սարեան
 PERSIAN WOMAN
 Martiros Sarian
 Tempera on board, 1910, 36.5 x 33.5cm.
 Martiros Sarian Museum, Yerevan

հանգրւանել է անհատ հաւաքածուներում, մասամբ էլ թանգարաններում: Տայաստանի Ազգային պատկերասրահում պահուած է միայն մէկ աշխատանք: 1916-ին Մոսկուայում կազմակերպուած նրա ցուցահանդէսում ներկայացել է շուրջ չորս տասնեակ նկար: Այս առիթով տպագրուած պլոնի հեղինակը՝ Ն. Լավրսկին գրում է. «Միզանաջեանի արեստը բանաստեղծական հեքիաթ է, գունագեղ, շոյող ու օրօրող: Նա սիրահարած է Արևելքին, բայց նրա Արևելքը անիրական է, անրջական...»:

Միզանաջեանի պատանեկութիւնն անցել է Նոր Նախիջևան հայկական քաղաքում, Դոնի ափերին: Դեռ երեխայ՝ նա հօր հետ ճանապարհորդել է Անդրկովկասում, հասել Իրան: Թերևս այդ ժամանակներից էլ նրա մէջ արմատներ է գտել հոգևոր հայրենիքի գաղափարը: Մոսկուայի գեղարեստի ուսումնարանում սովորելիս նա չի ենթարկւել ուսուցիչների՝ բնութիւն, շրջապատ, բնորդներ նկարելու պահանջին. նրա երևակայութիւնը թափառել է այլ հորիզոններում:

«Ես միշտ սիրել եմ երագել» — Միզանաջեանի այս արտայայտութիւնը, նրա արեստի ճշգրիտ բնորոշումն է: Երագել է ու նկարել դրախտային այգիներ, ծառ ու ծաղիկ, հեզաձեւ եղնիկներ, գունազարդ գորգերի վրայ պարող

աղջիկներ... Միզանաջեանը դրդում է դիտողին կտրել կեանքի տաղտուկից, ամէնուրեք որոնել գեղեցիկը, ապրել «հազար ու մի գիշերայ» կախարդանքով: Այս մասին է նկարչի երգը, որ սնւել է իրանական արեստի կենսալի աղբիւրներից:

20-րդ դարասկիզբի հայկական արեստը նշանաւորեց Մարտիրոս Սարեանի (1880-1972) յայտնութեամբ: Ի տարբերութիւն նախորդ նկարիչների, նա իսպառ հրաժարեց մոսկովեան ուսումնառութեան շրջանի պատկերման ձևերից ու իր առջև խնդիր դրեց սեփական գեղանկարչական լեզւի ձևակերտմանը: Միաձուլելով ազգային մշակոյթի աւանդոյթներն ու դարասկիզբի ֆրանսիական գեղանկարչութեան, յատկապէս ֆովիզմի սկզբունքները, նա ստեղծեց իր աշխարհընկալմանն ու հոգեկան կերտածքին համահունչ ինքնուրոյն, արդիաշունչ արեստ:

Իրականութեան բացայայտման գլխաւոր բանալին Սարեանի համար հայրենի և առհասարակ արևելեան բնաշխարհին ներյատուկ լուսային տաք մթնոլորտն է: Նոր-Նախիջևանում ծնւած նկարիչը առաջին անգամ իր

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
 Մարտիրոս Սարեան
 PERSIA
 Martiros Sarian
 Tempera on canvas, 1915
 112 x 120cm.
 Private Collection, Russia



ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ
 1880-1972
 MARDIRO SARYAN

Shiraz.” Unfortunately, the painting until today has remained lost. According to the published opinion of famous Russian intellectuals, artist I. Rebin and art historian V. Sasov, that painting was a great masterpiece.

When one enters the Sureniants hall in the National Gallery of Art in Yerevan, one painting in particular immediately attracts attention, a painting of extraordinary Near Eastern beauty, “Firdusi Reading the *Shah-name* to the Shah Mamhmud Ghazavi” (1913). As one gazes at the painting, it seems one is first going to see the famous poet’s face; instead he is depicted in the foreground of the painting with his back to the viewer. It quickly becomes clear that in the artist’s concept, Firdusi’s *Shah-name* is Iran entire, the beautiful land of Iran. Everything in the picture—the Shah, his throne, his bodyguards, the almond-bearing youth, even the tiger sitting at the Shah’s feet—are under the magical spell of the poem. Thanks to the general yellow-green palette used in the painting and the magnificent decorative harmony of the painting, the people and the objects around them are seen as a unified whole. The impression of an unfolding carpet, capturing and condensing the soul of the country, is created by the painting.



ԹԵՎՐԱՆԻ ՓՈՂՈՑ
Մարտիրոս Սարեան


PERSIA: A STREET IN TEHRAN, Detail
Martiros Sarian, tempera on canvas, 1913, 147 x 185cm.
Martiros Sarian Museum, Yerevan

նախնիների հայրենիքը՝ Հայաստանը տեսաւ քսանմէկ տարեկան հասակում, 1901-ին և մէկընդմիջտ կապեց նրան:

Սարեանի արեստում իրականութեան ձևերը վերարտադրում են ծայր աստիճան պարզեցրած, վերածում են հարթ, մաքուր գունաձուլանքի: Նկարչի վառ, առաւելագոյն հնչողութեան հասցած գոյնը (ի տարբերութիւն ֆովիստների) օժտուած է զարմանալի, ասես զաղտնախորհուրդ մի յատկութեամբ. նա կարծես լոյսի աղբիւր է, լոյս է կրում իր վրայ: Գոյների կապը (յաճախ հակադիր) պատկերի մէջ ստեղծում է իրովի տաք, պայծառ լուսաւորութիւն: «Ես գոյնով աւելի ուժեղ եմ վերցնում տեսածս, որպէսզի աւելի ուժեղ հնչի լոյսը իմ կտաւներում»,— գրել է նկարիչը: Նա Արևելքը դիտում էր ո՛չ թէ դրսից, ընկալում ո՛չ թէ հիւրի աչքերով, այլ ներսից՝ կարելի է ասել, արեան կանչով: Սարեանը արևապաշտ է: Նրա վրձինն ասես ներծծուած է արևով, և նրա պատկերներից անգուապ յորդում է կեանքը: Յափտենութեան խորհուրդն իր մէջ ամփոփող Սարեանի արեստի ակունքները պահուած են հեռու անցեալում, հաղորդում են քրիստոնէական հաւատքին, առնչում նոյնիսկ հեթանոս ժամանակների ոգուն: Սարեանը մի կողմից կամուրջ նետեց դէպի նախնեաց մշակոյթը, դէպի հայ մանրանկարիչների գունաշխարհը, միա կողմից նորի

իր զգացողութեամբ, նորարական ստեղծագործութեամբ զուգահեռեց արդի արեստին, նրա սկզբունքներին: Տեղին է յիշել, որ դարասկիզբի կրոնացի յայտնի վարպետները նոր արտայայտչաձևեր որոնելիս սևեռուն յետադարձ հայեացք ուղղեցին դէպի հին քաղաքակրթութիւնների մշակոյթը:

Իբրև Արևելքի հարազատ զաւակի, Սարեանին ձգել են արևելեան երկրները: Հանապարհորդելիս նա ըմբռնել է այդ իւրօրինակ աշխարհի բուն էութիւնը: Եգիպտոսից յետոյ, 1913-ին, Մազանդարան, Մաշադիսար, Բարֆրուշ երթուղով նա եկաւ Թեհրան: Այս առթիւ վկայակոչենք մի հատուած Սարեանի «Գրառումներ իմ կեանքից» գրքից. «...Ձինագագաթ Դամաւանդի թագը շողշողում էր անգամ գիշերը: Հիւրասէր տանտիրոջ նման մայր բնութիւնը՝ նկարչի ամենամեծ ու անդաւաճան բարեկամը, ինձ իր գիրկն էր վերցրել: Կախարդանքի այդ թագատրութեան մէջ ամէն ինչ հէքիաթ, երազ էր թոււմ, մանկութեան յիշողութիւնների ու ապրումների նման քաղցր ու



The love of the artist towards Oriental culture penetrates into each of his works in the Iranian series, as well as in his illustrations of books, giving rise to unending awe to the viewer.

The works of Hovakim Miganajian (1883-19) are testimony to his worship of the Iranian miniature art. The little known Miganajian lived most of his life in Moscow. Some works are in private collections, and some are in museums. The Armenian National Gallery of Art has only one of his works. About forty of his paintings were exhibited in Moscow in 1916. In his catalog for the exhibit, N. Lavrski recorded, "Miganajian's art is a poetic fable, colorful, caressful, like a lullaby. He is in love with the East, but his East is unreal, dream-like."

Miganajian spent his youth in the Armenian city of New Nakhichevan, on the banks of the Don. While still a child, he visited the Transcaucasus with his father, and went as far as Iran. Perhaps it was during this time that the idea of spiritual ties with the homeland took root within him. While a student in the Art Academy in Moscow, he did not follow his teacher's instructions to paint nature and his surroundings: his imagination roamed in other places.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԻՆՏԵՐԻՐ
Մարտիրոս Սարյան

EASTERN INTERIOR

Martiros Sarian, paper, watercolor, gouache, 1918, 39 x 58cm.

Martiros Sarian Museum, Yerevan

The true characterization of his art is captured in his own words, "I have always loved to dream." He dreamed of and painted gardens of paradise, trees and flowers, the gentle deer, and beautiful girls dancing on colorful carpets. Miganajian challenged the viewer to be cut off from the weariness of everyday life, to seek the beautiful everywhere, to live with the magic of "The Thousand and One Nights." The artist's song is about all this, nourished by the life-giving waters of Iranian art.

In the 20th century, Armenian art was notable for the emergence of Martiros Saryan (1880-1972). In contrast to earlier artists, he refused to be influenced by the contemporary techniques of Russian art and made it his task to form a new, individual artistic style. Combining the traditions of the Armenian national style of art with the school of French art of the early 20th century, especially the principles of Fauvism, he



ՀԱՇԱՐԱՆ ԹԱԻՐԻԶՈՒՄ
Յակոբ Կոճոյեան

A TAVERN IN TABRIZ
Hagop Kodjayan, tempera on canvas, 1922, 67 x 98cm.
National Gallery of Armenia, Yerevan

Կենսաթրթիռ... Տարբեր հնչողութեան զանգակներով ուղտերի ոխմիկ ընթացքը ստեղծում էր զարմանալի նուրբ մի երաժշտութիւն: Քայլում էին ուղտերը բեռնաւորաձ, հպարտ գլուխները դէպի վեր, դէպի արևը... Թեհրանից ոչ հեռու ջրվէժի բարձունքից թափուող ջուրը արևի ճառագայթների տակ ցոլցում էր հեքիաթային ծիածաններով: Երկու փոքրիկ էտիսդ արեցի ջրվէժից: Իրանք դիտելիս ջերմ, շատ ջերմ յիշողութիւններ են զարթնում իմ մէջ»:

Իրանում Սարեանին ամենից աւելի հետաքրքրել են բնութիւնը և մարդկային կեանքը բնութեան մէջ: Այդ են վկայում նրա ճամբորդական տասնեակ էտիսդները:


Ռաշտի և Էնգելի վրայով տուն վերադառնալուց յետոյ, նա հանրա- գումարի է բերում իր տպաւորութիւնները, սինթեզում և նկարում է Իրանին նւիրած մի շարք նշանակելի կտաւներ, որոնք հարազատ են իր նկարչութեան բուն էութեանը:

«Պարսկուտիւն» մի փոքրիկ սքանչելիք է: Անմիջապէս կարելի է նկատել, որ պարսկուտու դէմքը նմանեցած է դիմակի: Ինչո՞ւ դիմակ: Շատ վաղ ժամանակների արեստի այդ ատրիբուտը Սարեանն իր գործերում («Եգիպտական դիմակներ», «Արևելեան Նատիւրմորտ» և այլն) միշտ պատկերել է խորհրդատր կենդանի արտայայտութեամբ, ներկայացրել իբրև յաւերժութեան խորհրդանշան:

«Պարսկուտիւն» դիմանկարում արևելքցի աղջկայ դէմքը նմանեցնելով դիմակի, հեղինակը շեշտում է նրա դիմագծերի, նշաձև աչքերի կախարդիչ, դասականօրէն անթերի գեղեցկութիւնը, որը միաժամանակ խորհրդատր ու խորհրդանշական է դիմակի պէս, բայց և կենդանի ու առինքնող՝ գոյների մաքուր հնչեղութեամբ, սևեռուն հայեացքի ներթափանցող անշարժութեամբ:

Սարեանի համար յափտենութեան խորհուրդ է կրում նոյնիսկ կենցաղի ամենապարզ կիրառական առարկան՝ զարդանաշխւած աման, հողաթափ, սափոր, կտորեղէն: Նատիւրմորտներում պատկերած իրերը նկարիչը ձեռք է բերել Իրանում: Առարկաների ընտրութիւնն իսկ վկայում է նկարչի գեղարեստական բարձր ճաշակը, իսկ կտաւներին յատուկ հրճաւի, կենսաթրթիռ գունային մթնոլորտը ընկալում է իբրև կեանքի, աշխարհի գեղեցկութեան վայելքի վկայագիր:

Հայաստանը պատկերող ամէն մի բնանկարի մէջ Սարեանը ձգտում է երկրի տիպական գծերի շեշտման,



created an original, modern art which was consonant with his world-view and spiritual outlook.

The first key for Saryan in the expression of reality was the hot atmosphere of the Armenian and, in general, the Oriental landscape. The artist, who was born in New Nakhichevan, saw the land of his forefathers, Armenia, for the first time when he was 21 years old, in 1901, and was thereafter always tied to it.

In Saryan's art, the forms of reality are reproduced in an extremely simplified form, reborn as flat, colorful expanses of color. The artist's live and especially resounding color, in contrast to the Fauvists, is endowed with an amazing, one would say deeply mysterious quality. It is as if the artist is the source of light, and he bears the light. The relationships of colors, often contrasting, create a hot, bright illumination in his paintings.

The artist wrote, "I depict what I see more powerfully through colors, so that the light resounds more powerfully in my canvas." He did not view the East from the outside, as through the eyes of a guest, but rather from within, by the call of his blood. Saryan was a worshipper of the sun. His brush was imbued with the sun and life flowed unrestrained through his paintings. The sources of Saryan and the eternal symbol, in which is encompassed the mystery of art, was in the past, in communication with the Christian faith, and was in contact

ՀԵՏԵԼԱՆՈՒԲԻՄ ԹԱՌԻԲՉՈՒՄ
Յակոբ Կոճոյեան

CAVALRY IN TABRIZ

Hagop Kodjoyan, tempera on paper, 1921, 23.5 x 29.5cm.
National Gallery of Armenia, Yerevan

even with the spirit of the pagan past. On the one hand, Saryan constructed a bridge toward the culture of his forefathers, towards the world of color of Armenian painting; on the other hand with his emotions tied to the new, his innovative creations run parallel with modern art and its principles. Famous European artists of the beginning of the century, searching for new forms of expression, turned their focused attention toward the culture of ancient civilizations.

As a true son of the Near East, Saryan was placed by them in Oriental art. In his travels he enjoyed the true essence of that unique world. In 1913, after visiting Egypt, he came to Tehran by means of the Mazandaran, Meshediser, and Barfrush Railroad. In his work "Memories From My life," he wrote, "Dmentevi's snow-covered crown shone in the night. Mother nature, like a hospitable host, a painter's most sincere and faithful friend, held me to her bosom. In that magical kingdom, everything seemed to be a fairy-tale, a dream, as sweet and life-giving as childhood memories and traditions. With the differing sounds of bells, the rhythmic steps of the camels cre-



ՓՈՂՈՑ ԹԱԻՐԻԶՈՒՄ
Յակոբ Կոչոյեան

A STREET IN TABRIZ

Hagop Kodjoyan, tempera on canvas, 1922, 89 x 140cm.
National Gallery of Armenia, Yerevan

Նրա դիմանկարի ստեղծման: Նոյնը կարելի է տեսնել նաև «Իրան» պաննո-նկարում: Սուր տեսողական յիշողութեամբ նկարիչը սինթեզել է մի է բերել իր նորածանօթ ու սիրած երկրի բնութեան ու կենցաղի ամենաբնորոշ կողմերը: Նկարում, ասես հայելու մէջ տեսնում ենք Իրանի ընդհանրական դէմքը: Պատկերի դեղնականաչաւուն կոլորիտը ողողւած է հարաւային արևի շողերով, յաւերժական անխռով, իմաստուն անդորրով: Նոյն մօտեցումով, բայց առաւել առարկայական լուծում ունի, «Թեհրանի փողոցը»:

Իբրև Արևելքի իւրօրինակ երգիչ, Սարեանը լայն հասրաւ է վայելել, մասնատրապէս, Մոսկուայում: Շէքրատովների նորակառոյց դղեակում, որի ճարտարապետն էր Ալ. Թամանեանը, նրան պատիրում են արևելեան ոճով ձևաւորել մի դահլիճ: Պահպանել է ձևաւորման գունանկարը, հիանալի մի գործ, որը Մ. Սարեանի թանգարանին է նւիրաբերել հայրենասէր մի անձնաւորութիւն, ճանապարհի շինարար ճարտարագէտ Գուրգէն Յանիկեանը, որը ժամանակին աշխատել է Իրանում:

1934-ին, երբ Տայաստանում նշուած է Ֆերդոսու ծննդեան 1000-ամեակը, լոյս է տեսնում մեծ բանաստեղծի, «Ռոսթամ և Սոհրաբ» պոէմը՝ Շահնամէից, որի նկարագար-դումները կատարում է Սարեանը: Սև գրչածայրով ու միալար գծերի հիասածքով ամբողջացած, հինգ տասնեակի հասնող այդ հիասքանչ նկարագարդումներն իրենց լուծման սկզբունքով մօտ են իրանական մանրանկարչու-

թեանը ու նոր կողմից են բացայայտում նկարչի վարպետութիւնն ու իրանական մշակոյթի ընկալումը:

1920 թականից, շուրջ երկու տարի, Թարիզում է ապրել հայկական նկարչութեան մէկ այլ անկրկնելի վարպետ՝ Յակոբ Կոչոյեանը (1883-1959): Ոսկերչի ընտանիքում մեծանալն ու դեռ մանկուց ոսկերչութեան ու փորագրութեան արեստներին հաղորդակցելը կանխագծել են ապագայ Կոչոյեան-արեստագէտի նկարագիրը: Տետագայում Միւնխենի գեղարեստի ակադեմիան աարտած նկարչի համար ներշնչանքի աղբիւր ու վարպետութեան դպրոց են հանդիսացել հայկական միջնադարեան մանրանկարչութիւնն ու ժողովրդական դեկորատիւ-կիրառական արեստը: Տետագայ տարիներին ժամանակի շունչը խորապէս ընկալող մեծատաղանդ նկարչին տոգորել են հայրենիքի ազատութեան, վերածնութեան ոգին, 1915-ի եղեռնի ողբերգութիւնից յետոյ շինարար կեանքի լծած ժողովրդի առօրեան: Կոչոյեանին է պատկանում հայկական ժողովրդական էպոսի՝ «Մասունցի Դաթի» իւրօրինակ (36 պատկեր մէկ էջի վրայ) աննախադէպ նկարագարդումը: Նկարչի այս գլուխգործոցը կատարել է ժողովրդական բանահիսու-



ԹԱԻՐԻԶԻ ԲԵՆՆԱԿԻՐՆԵՐԸ
Յակոբ Կոճոյանի

PORTERS IN TABRIZ

Hagop Kodjoyan, gouache on paper, 1921, 20 x 30cm.
National Gallery of Armenia, Yerevan

ated an amazingly subtle music. The camels, bearing their burdens, walked with their proud heads held high, towards the sun. Not far from Tehran, the water pouring over a high waterfall was reflecting under the rays of the sun, the fairy-tale like rainbows. I made two paintings of that waterfall. When I look at them, very warm memories arise within me.”

In Iran, Saryan was most interested in nature and in the life of man within nature. His traveling and painting are testimony to this. These pocket-paintings are impressions only, but Saryan is not the painter of impressions. After returning home via Rashd and Enzeli, he gathered and synthesized his thoughts and painted a series of canvases devoted to Iran which reflect the true essence of his painting.

“The Iranian Woman” is a small masterpiece. One immediately notices that her face resembles a mask. Why a mask? Saryan utilized that technique from a very early time in works such as “Egyptian Masks” and “Oriental Still-Life.” He always depicted his scenes with a symbolic and lively expression, represented as the symbol of eternal life. In the “Persian Woman,” by making her face resemble a mask, he emphasized her outlines, the classic, perfect beauty of her almond-shaped eyes, which are at once mysterious and symbolic like a mask, but alive and with the pure resonance of colors and with the penetrating stillness of her gaze.

In all of his landscapes which depicted Armenia Saryan always endeavored to emphasize the unique features of the country. The same can be seen in the panorama “Iran,” where

with his sharp visual memory he synthesized and brought together the most characteristic facets of nature. In the painting one sees the general view of Iran through a mirror. The yellow-green palette of the painting is inundated with the rays of the southern sun, eternal, undisturbed and peaceful. The painting “Tehran Street” has a similar approach, but with an even more objective analysis.

As an original painter of the Near East, Saryan enjoyed great fame, especially in Moscow. In the newly constructed castle of the Shcherbatovs, whose architect was Alexander Tamanian, Saryan was commissioned to design a hall with a Near Eastern style. The color-plan for that design has been preserved, a wonderful piece of work. American civil engineer and patriot Gourgen Yanikian, who had worked in Iran, donated the plan to the Martiros Saryan Museum in Armenia.

In 1934, when the 1000th anniversary of Firdausi was celebrated in Armenia, Saryan did the illustrations for the poem “Rostam and Zohrab,” a part of the epic *Shah-name*. The more than fifty illustrations very closely resembled Iranian miniature painting in their principle of solution and revealed a new facet of the artist’s mastery, his understanding of Iranian culture.



ՊԱՐՍԿՈՒՆԻՆ
Յակոբ Կոջոյեան
PERSIAN WOMAN
Hagop Kodjoyan
Tempera on paper, 1922, 32 x 24cm.
Private Collection, Yerevan



ՅԱԿՈՒԲ ԿՈՋՈՅԵԱՆ
1883-1959
HAGOP KODJOYAN

թեանը ներդաշնակ, անկաշկանդ երևակայութեամբ և արտայայտիչ գունա-գծային ձևերով: Կոջոյեանի թէ՛ գեղանկարչական և թէ՛ մանաւանդ գրաֆիկական գործերին յատուկ է նրա արւեստի իրակերպութիւնը պայմանատրոդ, պատմականի ու արդիականի խոր զգացողութիւնն ու օրգանական միաձուլումը: Նա համարում է գրքի ձևատրման ու պատկերազարդման հայկական նոր դպրոցի հիմնադիրը:

Կոջոյեանի մի շարք գործեր, որոնք ստեղծել են նախքան Թարիզ մեկնելը, արդէն կրում են նրա ուրոյն գունային մտածելակերպի կնիքը: Նկարիչն իր կտաւի մակերեսը կարծես ծածկում է մոխրա-կապտաուր, արծաթագոյն շղարշով: «Անիի Աւերակները» (1919) նկարին դրամատիկ շունչ է հաղորդում այն, որ իրական տեսարանը նկարիչը պարուրել է իր երևակայութեան և զգացողութեան ծնունդը հանդիսացող, լուռ ու խորհրդաւոր մթնոլորտ ստեղծող ընդհանուր կապտաուր երանգով:

Նոյն սկզբունքով են իրականացած Կոջոյեանի նշանաւոր թարիզեան գործերը: Այստեղ, սակայն, միահիւսած են ոչ թէ իրականն ու երևակայականը, այլ իրականն ու անսովորը, կամ իրականն ու իրականի գերտպաւորիչ յատկանիշները: Փոխուում է նաև կապտաուրը, այն մեղմանում է, տեղը զիջելով հնչեղ, տաք երանգներին:

«Փողոց Թարիզում» պատկերը թատերական բեմ է յիշեցնում, ուր շեշտած անընդհատ մի գործողութիւն է ծաւալում: Դիտողն ասես ներկայ է արևելեան քաղաքի ողջ էկզոթիկ հարստութիւնը խտացնող թատերախաղի, թում է նոյնիսկ, թէ լսում ես «դերակատարների» ձայները: Ասէն ինչ ենթարկւած է «ռեժիսորի»՝ նկարչի կամքին: Գործող անձանց՝ սուր մօրուքով իմաստուն դերվիշ, նրա կողքին՝ սիրահետող հայեացքով ձեռքին վարդ բռնած աճաբար, ժպտուն աչքերը նրան յառած կին, հեծեալ երիտասարդ, վաճառական, գնորդ, մատուցողներ... ասէնքին իրենց շենշող հանդերձանքով նկարիչը տեսել, յիշողութեան մէջ պահել, յետոյ խմբաւորել, դրել է իրենց «դերերի» մէջ ու, առաւելագոյնս ընդգծելով իրաքանչիւրին յատուկ շարժուձևը, մի պահ՝ «անշարժացրել»: Այդ արտասովոր, աղմկոտ, հիւմորով ու բարութեամբ լի պատկերը զարմանք ու հրճւանք է պատճառում, հաղորդելով Արևելքի հանդէպ նկարչի սէրն ու հիացմունքը:

Կատարման նոյն սկզբունքը, նոյն ջերմ մթնոլորտը, ձաշակն ու գեղեցկութիւնն են իշխում նաև «Նեծելախումբ», «Ճաշարան Թարիզում», «Բեռնակիրներ», «Պարսկուհի», «Շախսէյ-Վախսէյ» ու այլ պատկերներում:



ՇԱԽՍԷՅ-ՎԱԽՍԷՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
 Յակոբ Կոճոյեան
 SHAKHSEY-VAKHSEY RELIGIOUS CEREMONY IN TABRIZ
 Hagop Kodjoyan, tampera on board, 1919
 National Gallery of Armenia, Yerevan

From 1920 on, for two years, one other unique Armenian artist, the master painter Hagop Kodjoyan (1883-1959), lived in Tabriz. He was raised in a jeweler's family and while still a child learned the art of goldsmithing and engraving, which were a forecast of the young Kodjoyan's future. After he graduated from the Munich Academy of Arts, Armenian medieval manuscript painting and popular decorative arts became the inspiration and school for the future master. In later years he was inspired by the Armenian spirit of liberation, the spirit of rebirth, and the daily life of the people after the tragedies of 1915. Kodjoyan created an unprecedented work, with his 36 illustrations of the popular Armenian folk hero, the epic of David of Sassoon. The artist executed this masterpiece with an unrestrained imagination, and with passionate and expressive colors which were in harmony with the popular epic. In both Kodjoyan's artistic and graphic works one can see the combination of the historical and modern, in organic and original composition. He is considered to be the founder of the new school of book illustration.

Kodjoyan's work, created before he left Tabriz, already bore the stamp of his original use of color. It was as if the surface of

his canvas was covered in a gray/blue silver gauze. "The Ruins of Ani" (1919) conveys a dramatic sense, due in part to the artist's ability to bathe the real view in a peaceful and mysterious atmosphere, created by unusual color.

The same principles were utilized in the realization of Kodjo-yan's famous Tabriz series. Here, not only are reality and imagination intertwined, but the real and the unusual, or the real and the most impressive characteristics of the real. The use of color has also changed; it is softer, giving place to resounding hot hues.

The painting "Street in Tabriz" reminds one of a stage, where constant activity is emphasized. It is as if the viewer is present at a play which encompasses the entire wealth of an exotic Oriental city. It seems as if you can hear the voices of the actors. Everything is subject to the "director," to the artist's will. The actors, such as the wise Dervish with a sharp beard, the magician holding a rose in his hand and a woman with smiling eyes, the youth on a donkey, as if on a horse, the shopkeeper, the customer, the porters, all seen by the artist, kept in his memory, all seen in their rich clothes, and then reassembled. He puts them into their roles, depicts each of their movements and "freezes" them for a moment. The painting,



ԹԱՐԻԶԻ ԵՐԵՄԱՆԵՐԸ
Յակոբ Կոչոյեան

CHILDREN OF TABRIZ
Hagop Kodjoyan, tempera on paper, 1921, 19.5 x 35cm.
Private Collection, Yerevan

Քննարկելով Կոչոյեանի «Քնած Պարսկոտին» գրաֆիկական աշխատանքը, արեստապան Վ. Մաթևոսեանը շատ հետաքրքիր վերլուծություն է անում. «...Նկարիչն ստեղծել է ծաղիկների, ծառերի, թռչունների, կենդանիների, անգամ արեգակի, երկնքի ու մարդու օրնամենտային սիմբոլներ: Դրանց մեջ երևում են իրանական գորգագործության, արծաթագործության, հայկական մանրանկարչության ու խաչքարերի նախշազարդման մշակոյթի աանդոյթները: Պատկերագծային-օրնամենտային հիւսածքը, թում է, անսկիզբ-անվախճան, իր շարժման ընթացքին փոխակերպում է մի ձևից միւր, վերածում տեսողական հեքիաթի, դիտողին հաղորդելով աշխարհի՝ որպէս յաւերժական արարչագործութեան գաղափարը» (Յ. Կոչոյեան, Երևան, 1983):

Մանրանկարչական այս գոհարը, որի կատարման սկզբունքները շարունակում ու զարգանում են հետագայ աշխատանքների մեջ, Կոչոյեանն ստեղծել է Երևանում, Իրանից վերադառնալուց յետոյ: «Քնած Պարսկոտին» կարելի է դիտել որպէս հրաժեշտի ձօներգ նկարչին հիւրընկալած երկրին՝ հեքիաթային, «հազարումէկ գիշերների» Իրանին:

Իրանին սահմանակից Նախիջևանի Ջահուկ գիւղում ծնած Սեդրակ Առաքէլեանը (1884-1942) նորագոյն շրջանի հայ նկարչութեան ականատոր դէմքերից է: Իրականութիւնը երգող գոյներով լաւատեսօրէն ընկալելու իր բնոյթով նա մերձենում է Սարեանին: Առաքէլեանը գերող նրբութեամբ է որսում հայկական գիւղի, գեղջկական առօրեայի առանձնայատուկ հմայքը, աշնանային անկրկնելի ակնթարթների գեղեցկութիւնը, բանաստեղծութիւն «գտնելով» ամենասովորական տեսարանների մեջ:

Բնութեան հետ երկխօսութեան այս վարպետը սիրել է նաև պատկերել քաղաքային գողտրիկ անկիւններ: Այդ շարքի գործերից է «Գէոյ մզկիթը»: Երևանի հին շուկայի մօտակայքում, ցածրիկ տնակների մէջ վեր խոյացած իրանական մզկիթը՝ արևի տակ պսպղացող իր երկնագոյն գմբէթով, նկարիչը հրամցնում է որպէս հին Երևանի ճարտարապետական գեղեցկութիւններից մէկը:

Ստեղծագործողի իր տաղանդին անմնացորդ յանձնած, մինչև վերջ արեստին ու հայրենիքին նիրած անհատականութիւն էր Սարգիս Խաչատուրեանը (1886-1947): Ծնել է Մալաթիայում, սովորել Էրզրումի Սանասարեան վարժարանում: Գեղարեստական կրթութիւնը ստացել Հռոմի գեղարեստի ակադեմիայում (աւարտել է ոսկէ մեդալով), և Փարիզի զարդարեստի բարձրագոյն դպրոցում:

1915-ի ողբերգական օրերին Խաչատուրեանը եկել է Հայաստան, թափառել հայրենի երկրում ու մի քանի տարայ ընթացքում ստեղծել բազմահազար անտունիների կեանքը պատկերող շուրջ 500 նկար: Դրանց ընտրանիով նա ցուցահանդէսներ է կազմակերպել կրոպական մի շարք կենտրոններում, դարձել մայր ժողովրդի տառապանքների վաւերագիրը: 1925-ին, այդ թեմայով գործերից կազմած


ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒԿԱՆ ԵՒ
ԳԷՈՅ ՄՋԿԻԹԸ
Սեդրակ Առաքելյան

MARKET OF YEREVAN AND
THE GEOY MOSQUE

Setrak Arakelian,

Oil on canvas, 1921, 70 x 102cm.

National Gallery of Armenia, Yerevan



ՍԵՂՐԱԿ ԱՌԱՔԷԼԵԱՆ

1884-1942

SETRAK ARAKELIAN

unusual, noisy, filled with humor and goodness, causes amazement and wonder about the Near East of that era.

The paintings "Cavalry," "Restaurant in Tabriz," and "The Porters" are done in the same style and warm atmosphere, with taste and beauty. Art critic V. Matevossian, discussing Kodjoyan's graphic work, "The Sleeping Iranian Woman," made a very interesting analysis: "The artist has created ornamental symbols of flowers, trees, birds, animals, even of the sun, sky, and man. The beautiful decorative traditions of Iranian carpet-making and silver work, and Armenian manuscript illumination and *khatchkars* (stone-crosses) appear in them. The texture of the decoration and lines seems without beginning or end, changing in its movement from one form to the other, transformed into a visual fairy-tale, communicating to the viewer the world, the idea of eternal creation." (*H. Kodjoyan*, Yerevan, 1983).

Kodjoyan created this gem of a painting, whose principles of execution continue to be developed in his future works, in Yerevan, after returning from Iran. "The Sleeping Iranian Woman" can be seen as a going-away present to his host country Iran, to its fabled "One Thousand and One Nights."

Setrak Arakelian (1884-1942) was born in the village of Chahuk, in the area of Nakhichevan, which borders on Iran. He is one of the most famous figures in Armenian painting of the modern period. With his colorful palette which sings of reality and his understanding of nature he approaches the stature of Saryan. Arakelian, with a superior subtlety, searched for the characteristic charm of every-day life in the Armenian village, for the fleeting moments of beauty in the autumn, and for the poetry in even the most common scenes.

This master, who was in dialogue with nature, also liked to depict the affectionate corners of the city. Among that series was "The Mosque of Geo" near the old market in Yerevan. Among the lowly built houses, the Iranian mosque thrusts upwards, with its sky-blue dome glistening under the sun. The artist presented the sight as an example of the beauties of the old Yerevan architecture.

Sarkis Khatchadourian (1886-1947) was an individual devoted until the end to his art and to his homeland. He was born in Malatia and was educated at the Sanasarian School in Erzerum. He was trained in art at the Reggio Institute of Fine Arts in Rome, graduating with a gold medal, and the School of Decorative Arts in Paris.



ՍԻՐՈՅ ԸՄՊԵԼԻՔ. ԻՐԱՆԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ՊԱՏՃԷ
Սարգիս Խաչատուրեան

LOVE DRINK. COPY FROM XVIII CENTURY IRANIAN FRESCO
Sarkis Khatchadourian, tempera on canvas, 1934, 184 x 278cm.
National Gallery of Armenia, Yerevan

ալպոմում, որ լոյս է տեսել Վիեննայում կրոպացի յայտնի արեստաբանների յառաջաբաններով, Խաչատուրեանին կոչել են «Հայոց վշտի երգիչ»:

1916-ին նկարիչը մասնակցում է Թիֆլիսում հիմնված Հայ նկարիչների առաջին միութեան, իսկ 1926-ին, Փարիզում «Անի» ընկերության կազմակերպմանը:

Այսպիսի հազեցած գործունեություն ծառայած նկարիչը 1930-ին գալիս է Իրան և լծում երախտաշատ մի աշխատանքի: Նա տարիներով նստում է Իսֆահանում Շահ-Աբբասի շրջանի որմնանկարների պատճենահանմանը: Իրանցից մի քանիսը ներկայացում է ընթերցողի ուշադրությանը: Իրանի արեստի նկատմամբ ինչպիսի սեր ու ինչպիսի անսահման համբերություն էր հարկավոր կրկնօրինակելու համար այդ հրաշալիքները, որոնք հնդկական Աճանտայի և ցելլոնեան Սիկերիայի վիսափոր տաճարների որմնանկարների տառապալից աշխատանքով ստեղծած պատճենների հետ, նա ցուցադրում է ԱՄՆ-ում, զանազան կրոպական քաղաքներում, այդ թում Փարիզի Չերնյուշի՝ արևելեան արեստի թանգարանում: Անձևեր արեստագետի գործը բարձր գնահատականի է արժանանում մասնագետների կողմից, իրաամբ համարելով սխրագործություն:


Խաչատուրեանը ոչ միայն եղել է Արևելքի եզակի մշակութային կոթողների կրկնօրինակողն ու վերականգնողը, այլև յայտնաբերողը: 1971-ին Խաչատուրեանի կնոջ՝ նկարչուհի Վավա Սարգիսի ջանքերով արժեքատր այդ հաւաքածուն հանգրանել է Երևանում: Այդ գործերի ցուցադրմամբ է բացում Արևելքի արեստին յատկացած բաժինը Հայաստանի Ազգային պատկերասրահում:

Խաչատուրեանը նկարագարողել է նաև Օմար Խայեամի քառեակների գիրքը: Այն լոյս է ընծայել Գրոսսէ և Դունլափ հրատարակչությունը:

Ահա թէ ովքեր են եղել Իրան-Հայաստան մշակութային կամուրջների վերստեղծողները: Մեր դարի 20-ական թականներին, քաղաքական, միջազգային կեանքի կտրուկ փոփոխությունների պատճառով «ոսկի կամուրջները» տասնեակ տարիներ դադարեցին գործելուց: Չգտումն ու ոգին, սակայն, ապրում էին, և յանձինս Իրանում ստեղծագործող հայ արեստագետների, տեցին նոր շողարձակումներ:

ՊԱՐՍԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՆԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ՊԱՏՃԷ
Սարգիս Խաչատուրեան

PERSIAN YOUTH
COPY FROM XVIII CENTURY IRANIAN FRESCO
Sarkis Khatchadourian
Tempera on paper, 63 x 49cm.
National Gallery of Armenia, Yerevan



ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
1886-1947
SARKIS KHATCHADOURIAN

During the tragic days of 1915, Khatchadourian came to Armenia, traveled throughout the country and during several years created about 500 paintings depicting the lives of thousands of homeless refugees. Choosing the most select of that group, he organized exhibits of his works in a series of European capitals, becoming the documenter of his people's suffering. In 1925, in an album devoted to that theme and published in Vienna, Khatchadourian was called "The Bard of Armenia's Grief."

In 1916 the artist participated in the first meeting of the Armenian Artists' Union in Tiflis, and in 1926, participated in the formation of the "Ani" organization. In 1930, this vastly experienced artist came to Iran and immediately became associated with worthwhile causes. For years he was dedicated to the copying of frescoes done in the period of the Iranian Shah Abbas. Several of those were brought to the attention of viewers. He showed great love and unlimited patience first towards Iranian art, then in the arduous labor involved in copying the wonders of the stone engravings of the temples of the Indian Achanda and Ceylons' Sikirian work, which were exhibited in the United States, in various European cities, and in the

Chernouche Eastern Art Museum of Paris. The devoted artist's work was highly acclaimed and appreciated by art experts and was considered prodigious.

So Khatchadourian was not only the copier and rebuilder of the monuments of unique Oriental culture, but was also the one who uncovered them. In 1971, thanks to the efforts of the artist's wife, painter Vava Sarkis, that valuable collection found a home in Yerevan. In order to exhibit those works, an Eastern Art section was especially set aside in the National Gallery of Art. Khatchadourian also illustrated a book, *Rubaiyat of Omar Khayyam*, quatrains in English published by Grosset & Dunlap, New York, in 1946.

These are the artists who rebuilt the cultural bridges between Iran and Armenia. Because of the decisive changes in the political and international life during the 1920s, the "golden bridges," were inactive for several decades. The desires and spirit, though, were alive, and in the Armenian artists, who were creating in Iran, gave off new rays.



ԻՐԱՆԱՀԱՅ ԱՐԻԵՍՏԱԳԷՏՆԵՐ

ԴԱՍԱԿԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐ

1915-ին, Արևմտեան Հայաստանին վիճակեց դառն ճակատագիր: Ժողովուրդն իր բնօրրանից արմատախիլ արեց, նրա մի ստար մասը ենթարկեց դաժան սպանդի, մի մասն էլ դարձաւ գաղթական, հանգրուան որոնելով տարբեր երկրներում: Հայոց լեզվի ու գիտակցութեան մէջ հաստատուեց «Սփիւռք» նոր հասկացութիւնը: Դրացի Իրանը օթևան տուեց հազարաւոր հայերի, որոնց զգալի մասը Արևելեան Հայաստանից էր: Նրանք էլ իրենց մասնակցութիւնը բերեցին տեղի մշակութային կեանքին: Յիշենք, Ալ. Թամանեանին, որը Թարիզում հիմնեց գեղարեստական դպրոց, ուր դասաւանդում էր նաև Յ. Կոչոյեանը:

Իրանահայ գաղութը (1920-30)ականներին ապրեց ստեղծագործական վերելքի նոր շրջան: Այդ վերելքն իր բնոյթով նման է Ֆրանսիայում, Եգիպտոսում, Լիբանանում ու այլ երկրներում հայկական գրական, գեղարեստական, թատերական, երաժշտական կեանքի աշխուժացմանը: Նպաստող ազդակը մի կողմից տեղեկատուութեան միջոցներն էին, թերթերն ու հանդէսները, միւս կողմից՝ եկեղեցական, ընկերային, կուսակցական հաստատութիւնների հայապահպանման գործունէութիւնը: Բացի այդ հասակ էր առնում հայ նոր սերունդը, որ մերեց երկրորդ հայրենիքի հասարակական ու մշակութային կեանքին, և տեղի ու մայրենի լեզուներից զատ՝ տիրապետեց այլ լեզուների: Գեղարեստի տեղական դպրոցներում մասնագիտացող նոր սերնդի համար բնորոշ դարձաւ արդիական գեղագիտական չափանիշների հետամուտ՝ ստեղծագործական ներկայանալի մակարդակի ապահովումը:

Նեռու անցեալի նման նկարչական արեստը իրանահայ մշակոյթի մէջ դարձաւ առաջատար ու յարաճուն զարգացող բնագաւառ: Իրանահայ նկարիչների աւագ սերնդի վարպետների մօտ զատորոշում է երկու հիմնական գիծ: Որդեգրելով իրանական արեստի զարդա-դեկորատիւ սկզբունքները, նրանցից ոմանք ստեղծում են այդ արեստին համահունչ ու որոշակի իրակերպութեամբ առանձնացող գործեր (Դարվիշ, Նահապետեան, Շահիջանեան և այլք), և կամ ոմանք էլ ընթանում իրանականը հայկականի հետ զուգորդելու ճանապարհով (Գուրգէնեան):

Երկրորդ գիծը ներկայացնում են իրապաշտական ուղղութեան հետևող նկարիչները (Վահրամեան, Մինասեան, Վարդանեան, Դև, Կիրեղեան, և ուրիշներ): Բնութեան ու կեանքի երևոյթների իրապաշտական ընկալումն այս արեստագէտների մօտ որքան տարբեր, նոյնքան էլ մօտ է ոգով: Ընդհանուրը նրանց համար սերն է իրականութեան հանդէպ ու զգացումների դրսևորման անկեղծութիւնը:

IRANIAN-ARMENIAN ARTISTS

CLASSICAL PAINTERS

In 1915, a bitter fate befell Western Armenia. The people were pulled by the roots from their homeland, a large portion of the population suffered cruel massacre, and others became exiles, searching for refuge in various countries. A new understanding of the word "Diaspora" became established in the Armenian language and consciousness. Neighboring Iran gave refuge to many thousands of Armenians, many of whom were from Eastern Armenia. They also brought their contribution to local cultural life; for instance, Alexander Tamanian founded an art school in Tabriz, where H. Kodjoyan also taught.

The Iranian-Armenian community entered a new period of creative revival in the 1920s and 1930s. That revival was similar to that which took place in France, Egypt, Lebanon, and other countries, in the renaissance of literary, artistic, theatrical, and musical life. The factors which contributed to this ascent were, on the one hand, the periodical press, newspapers and magazines, and, on the other hand, the activities of the church and social and political parties in the perpetuation of Armenian culture. Apart from that, a new generation had matured, which participated in the public and cultural life of their newly adopted countries, and mastered, in addition to Armenian and the local languages, other languages as well. For the new generation of artists trained in the local art schools, it became natural to aspire to modern esthetic standards and a new creative level.

The art of painting in the new Iranian-Armenian culture, as it had in the past, became an arena of progress and continued development. There are two primary currents that can be distinguished in the art of the senior generation. Some, adopting the principles of Iranian decorative art and ornamentation, created works similar in nature to it, with however, their own authentic characteristics: Darvish, Aghamalian, Nahabedian, Shahijanian and others. Some also melded the Iranian with the Armenian, such as Gurgonian.

The second current includes the artists who adopted a school of realism: Vahramian, Minasian, Dev, Kiureghian, and others. Their realistic understanding of nature and life was very different, yet also was the same in spirit. In general, for them, there was a love toward realism and sincerity in that expression.



ԴԱՐՎԻՇ Անտրե Սեւրուգեան

1894 -1996

DARVISH
(André Sevrugian)

Դարվիշը բացառիկ տեղ է գրաւում իրանահայ նկարչութեան մէջ: Միջազգային համբաւի արժանացած նրա ողջ ստեղծագործութիւնը (ստեղծել է աւելի քան երեք հազար պատկեր) արւեստին անմնացորդ նւիրելու ու խիզախելու արգասիք է:

Դարվիշը ծնւել է Թեհրանում: 1922-ին Թիֆլիս այցելելուց և հայ նկարիչների միութեան հետ որոշ ժամանակ գործակցելուց յետոյ, վերադառնում է Թեհրան: Նա շուրջ տաս տարի տքնաջան աշխատում է ու իրականացնում իրեն վաղուց հանգիստ չտող, անհաւատալի բարդ մի գերծրագիր: 1934-ին, Ֆերդոսու ծննդեան 1000-ամեակին, նա աւարտում է իրանական բանաստեղծութեան պսակը հանդիսացող «Շահնամէի» 416 ստեղծագործութիւններից բաղկացած պատկերազարդումները: Թեհրանում կառավարական հովանաւորութեամբ կազմակերպւած այդ գործերի ցուցահանդէսը մեծ յաջողութիւն է գտնում, հեղինակին բերելով «գիտութեան և արւեստի» շքանշան: Մեծածաւալ այդ աշխատանքի ոգեշնչման աղբիւրը Ֆերդոսու բանաստեղծութեան հետ մէկտեղ եղել է իրանական մանրանկարչութիւնը: Թեհրանի ցուցահանդէսից մէկ տարի անց՝ նոյն գործերը ցուցադրում են նաև Հնդկաստանում, Բոսնիայում և Կալկաթայում: Հեղարաբադի Նէզամին հարիւր աշխատանք է գնում և նւիրում Բոսնիայի թանգարանին, որտեղ դրանք մշտապէս ցուցադրում են նկարչի անունը կրող սրահում: Ստեղծում է Օմար Խայեամին նւիրած նոր պատկերաշար՝ բաղկացած 140 նկարաթերթից: Նկարում է Հաֆէզից 180 մանրանկարներ, ապա՝ Բաբա Թահեր Օրիանի քառյակների նկարազարդումներ: Այս ամէնի գեղարւեստական բարձր արժանիքը ոչ միայն կատարման վարպետութեան, այլև նկարչի ներաշխարհին յատուկ՝ յուզական, ռոմանտիկ նկարագրի դրսևորման մէջ է: Շնորհիւ իր արւեստի ինքնատիպութեան, Դարվիշի ցուցահանդէսները ջերմ ընդունելութիւն են գտնում նաև Վիեննայում, Բեռլինում, Բրիստոլում, Լոնդոնում...


Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ, Դարվիշը բնակութիւն է հաստատում Շտուտգարտում: Նա ստեղծել է Սայաթ-Նովայի խաղերին, ինչպէս նաև հայոց պատմութեանը նւիրած պատկերներ, որոնցից են՝ «Արա Գեղեցիկը և Շամիրամ», «Արտաշէս և Սաթենիկ», «Զօրավար Վարդանի Մահը», «Մուսա Լերան 40 Օրերը» և այլ գործեր:

Darvish occupies an exceptional place among Iranian-Armenian painters. His entire body of work, consisting of more than 3,000 paintings, which has achieved international fame, was the fruit of his courage and unending dedication to art.

Darvish was born in Tehran. In 1922 he visited Tiflis, and after working for a while with the local artist's union, he again returned to Tehran. For nearly ten years, unable to rest, he diligently worked, accomplishing an unbelievably complex plan. In 1934, on the occasion of the 1000th anniversary of the poet Firdusi, he completed work on 416 illustrations, which decorated the masterpiece and national epic of Iran, the "Shah-name." The exhibition of that work, sponsored by the Iranian government was very successful and merited for the artist the "Art and Science" medal. Along with the inspiration provided by Firdausi's work, Darvish was also influenced by Iranian miniature painting. Based on the rich traditions of literature and miniature painting, the painter not only combined the two, but subjected them to his artistic will, with the passionate temperament and fiery imagination of the Orient.


A year after their exhibition in Tehran, the same works were also displayed in Bombay and Calcutta, India. In Hyderabad, Nizame bought a hundred of his works and donated them to the Bombay Museum where they were put on permanent display in a gallery named after the artist. Inspired by this accomplishment, Darvish continued to create with his Dervish-like fanaticism. He created a new series of 140 paintings devoted to Omar Khayyam and followed with 180 miniature paintings of Hafez, and then with illustrations of the quatrains of Baba Taher Orian Hamadani. In all of this he demonstrated not only a high artistic standard in the execution of the works, but also, uniquely to his inner world, an expression of his emotional and romantic nature. Due to his artistic originality, Darvish's exhibitions were warmly received in Vienna, Berlin, Brussels, and London.

After World War II Darvish moved to Stuttgart where he continued to work with the same enthusiasm, creating paintings devoted to the poems of Sayat Nova and also to Armenian history, such as "Ara the Fair and Semiramis," "Artashes and Satenik," "The Death of General Vartan," "The Forty Days of Musa Dagh," and in other paintings.



ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

OMAR KHAYYAM SERIES
Watercolor, 1948, 25 x 20cm.
Private Collection



ՖԵՐԴԱՍՏԻ ՇԱՀՆԱՄԵԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ
 SHAHNAME (FIRDAUSI) SERIES
 Watercolor, 1926, 61 x 77cm.
 Maral & Nikola Markarian Collection, Lacañada, California

ՖԵՐԴԱՍՏԻ ՇԱՀՆԱՄԵԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ
 SHAHNAME (FIRDAUSI) SERIES
 Watercolor, 1927, 60 x 75cm.
 Private Collection





ՖԵՐԴՈՍԻ ԵԱՆՆԱՄԷԻ ՊԱՏԿԵՐԱԵԱՐԻՑ

SHAHNAME ((FIRDAUSI) SERIES

Watercolor, 1926, 61 x 77cm.

Maral & Nikola Markarian Collection, Lacañada, California

ՖԵՐԴՈՍԻ ԵԱՆՆԱՄԷԻ ՊԱՏԿԵՐԱԵԱՐԻՑ

SHAHNAME (FIRDAUSI) SERIES

Watercolor, 1921, 61 x 77cm.

Maral & Nikola Markarian Collection, Lacañada, California






ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

OMAR KHAYYAM SERIES

Batigüe, 80 x 50cm.

Albert & Meline Mirzayan Collection (Glendale, California)



ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

OMAR KHAYYAM SERIES
Watercolor, 1945, 32 x 22cm.
Private Collection



ՍԱՅԱՏ-ՆՈՎԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Batigue, 1956, 90 x 51cm.

Irene Aharonian Collection (Encino, California)



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Batigue, 1963, 92 x 51cm.

Magda Gharakhanian Collection (Glendale, California)

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Batigue, 1962, 92 x 62cm.

Aram & Gilda Djagharbekian Collection (Glendale, California)



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Batigue, 92 x 62cm.

Irene Aharonian Collection (Encino, California)



ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

HANDSOME ARA AND QUEEN SHAMIRAM

Batigue, 58 x 86cm.

Albert & Meline Mirzayan Collection (Glendale, California)



ԳՐԻԳՈՐ ՎԱՀՐԱՄԵԱՆ

1903 -1963

GRIGOR VAHRAMIAN

Վրձնի հիանալի վարպետ Գրիգոր Վահրամեանը (Գասպարբեկ) ծնել է հին Նախիջևանում: Նկարչական նախնական գիտելիքներ ձեռք է բերել Թիֆլիսի գեղարվեստի դպրոցում յայտնի գեղանկարիչ-մանկավարժ Եղիշե Թադևոսեանի և Շմերլինգի ղեկավարությամբ: Աւարտական առաջին մրցանակի արժանանալով, Վահրամեանը 1923 թականին մեկնում է Մոսկուա և ընդունում տեղի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը: Այստեղ նա կատարելագործում է ակադեմիկոս Դ. Կորոլովսկու արվեստանոցում: 1929-ին նա յաջողությամբ ավարտում է ուսումնարանը:

1930-ական թականների մոսկովեան ցուցահանդեսներին, Վահրամեանի ներկայացրած կտաւները արժանանում են քննատատների և յատկապէս Վարշաւսկու գնահատականին: Մի քանի աշխատանքներ գնում են թանգարանների կողմից:

1938-ին Վահրամեանը հաստատուում է Իրանում: Ստեղծագործութեանը զուգընթաց՝ նա զբաղում է մանկավարժական եռանդուն գործունէութեամբ: 1950-ին Թեհրանում, Աբադանում և Թաւրիզում կազմակերպած Վահրամեանի ու նրա սաների գործերի ցուցահանդէսը լայն արձագանգ է գտնում: Երբ կառավարութիւնը որոշում է Թաւրիզում ստեղծել նկարչական դպրոց, այդ գործը վստահում է Վահրամեանին, որը մինչև իր անակնկալ վախճանը դաստիարակում է նկարիչների մի ամբողջ սերունդ:

Վահրամեանն առաւելապէս վրձնել է դիմանկարներ ու նատիւրմորտներ: Իրենց կատարման սկզբունքով դրանք ուղիւստական են, աչքի են ընկնում գունային մակերեսների յագեցածութեամբ և հիպոթեզութեամբ:

Վահրամեանի կտաւներում գոյների հնչողութիւնը ինչպէս և մարդկանց մարմինների ու առարկաների գեղանկարչական ձևերը զուսպ են: Նրա պատկերներն օժտած են ներքին գրաւչութեամբ, թաքուն, ներամփոփ ուժով: Վահրամեանի տաղանդը բացայայտում է իրական աշխարհը իրովի կերպատրելու, մտքերն ու զգացումները խօսուն լեզուով մատուցելու մէջ:

Վահրամեանի արվեստը արժանի ընդունելութիւն գտաւ նաև Երևանում բացած ցուցահանդէսներում, որի գործերից հինգը հեղինակը նիւրեց Տայաստանի Պետական պատկերասրահին:

Grigor Vahramian (Gasbarbeg), a master of the brush, was born in old Nakhichevan. He received his early education in the Art School in Tiflis, studying under Yeghishe Tatevosian and Shmerlingi. He graduated first in his class and in 1923 left for Moscow and was accepted to the local academy of painting, sculpture, and architecture. There he perfected his art under the tutelage of Academician T. Gortovski. In 1929 he successfully graduated from the Academy.

In the 1930s, Vahramian's canvases, which were exhibited in Moscow galleries, earned the attention and praise of critics and especially of Varshavki. Several of his works were purchased by museums. Martiros Saryan also warmly expressed his opinions about his countryman Vahramian.

In 1938 Vahramian settled in Iran. Along with his creative work he was a dedicated teacher of the young. In 1950, an exhibition dedicated to Vahramian and his students, which was mounted in Tehran, was greeted with great acclaim. The same exhibition was also successfully mounted in Abadan and Tabriz. When the government decided to open an art school in Tabriz, they called upon Vahramian, who taught there until his untimely death, teaching an entire generation of artists.

Vahramian painted primarily portraits and still-lives. They were executed in a realistic fashion and were attractive in their use of color surfaces and in their rich hues. The beneficial influence of the famous Russian painter, V. Serov can be seen in his subtle use of colors to create harmony.

Vahramian's use of color in his depiction of the human body and in artistic forms was restrained. His paintings have an inner charm, with a concealed condensed power. Vahramian's talent is expressed in the real depictions of the world and in the rich offering of the mind and feelings.

Vahramian's work also merited attention in an exhibition which opened in Yerevan. He donated five of his works to the National Gallery of Armenia in Yerevan.



ԱՍԻԻՐՄԱՆՍ

STILL-LIFE

Oil on canvas, 1940s, 48 x 58cm.



ԻՐԱՆՈՒՏԻ ՇԱՄՍԻ ԶԱՄԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

PORTRAIT OF SHAMSII ZAMANI FROM IRAN

Oil on canvas, 1940s, 88 x 63cm.

National Gallery of Armenia, Yerevan

ՏԻԿԻՆ ԽԱԱԹԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

PORTRAIT OF MRS. KHALATIAN

Oil on canvas, 1940s, 54 x 46cm.

National Gallery of Armenia, Yerevan



ՆԱՏԻԻՐՄՈՐՏ
ՄԻԳԱՄԱՆՈՎ

STILL-LIFE
WITH FRUIT BOWL

Oil on Canvas, 1936, 47 x 53cm.

*National Gallery of Armenia
Yerevan*



ԴԵԻ
(Մարգար Դարաբեկեան)

1901 -1976

DEV
(Markar Gharabegian)

Դևը հաասարապէս ճանաչել է թէ՛ որպէս բանաստեղծ և թէ՛ որպէս նկարիչ: Կարելի է ասել, որ այս երկու արժանիքները իրոպի լրացրել են մէկը միւսին, հանդէս եկել որպէս միմեանց շարունակութիւն: Իբրև նկարիչ՝ Դևը շրջապատն ընկալել է բանաստեղծօրէն, իբրև բանաստեղծ՝ նկարչօրէն:

Դևը ծնւել է Թեհրանում: Նախնական կրթութիւնն ստացել է Թեհրանի և Նոր-Ջուղայի հայկական դպրոցներում: Փոքրուց անսահման սէր է ունեցել դէպի գեղարեստը ընդհանրապէս, և դէպի նկարչութիւնն ու գրականութիւնը՝ մասնաւորապէս: Հիմնել է սեփական արեստանոց-դպրոց, որը հետզհետէ յայտնի է դարձել ամբողջ Իրանում: Իրանահայ արդի արեստի նկարիչների գգալի մասը սովորել է Դևի հիմնած գեղարեստի դպրոցում:

Դևը հաասար յաջողութեամբ աշխատել է թէ՛ իւղաներկով և թէ՛ ջրաներկով: Դասական սկզբունքներից մինչև իմպրեսիոնիստական ոճ—այսպէս կարելի է բնութագրել նրա ստեղծագործական ուղին: Դիմանկարչական գործերում արեստագեղը ձգտում է որսալ տիպականը, բնորդի հոգեբանութեան գծերը: Ուշ շրջանի գործերում նկատելի է ակնթարթային գեղեցկութիւնների շեշտումը՝ բնորդի շարժումը, հայեացքի փոփոխութիւնը: Նոյնը կարելի է տեսնել բնանկարչական գործերում:

Դևը զբաղւել է նաև ծաղրանկարչութեամբ, հանդէս է եկել մասնաւոր: Իր ծաւալած լայն գործունէութեան շնորհիւ ընտրւել է Իրանի արեստագետների միութեան անդամ և մշակութային ձեռնարկումների խորհրդատու: Արքայադուստր Շամս Փեհլեվիի կողմից նա արժանացել է պատուգրի: Յուցահանդէսային կարևոր միջոցառումներին իր մասնակցութեան համար երկու անգամ պարգևատրւել է շքանշանով:

Մշակոյթի անխոնջ նփրեալ էր Դևը: Եւ բնական է, որ մեծ պատրաստակամութեամբ նա ստանձնել էր իրանա-միջազգային և իրանա-հայկական արեստի առընչութիւնները կամրջողի երախտաշատ դերը: Նկարչի ու բանաստեղծի նրա վաստակը ըստ արժանւոյն գնահատեց նաև Հայաստանում, երբ հայրիների հրաւերով առիթ ընծայեց իր արեստը ներկայացնելու Երևանում:

Dev is recognized equally as a poet and as a painter. It is possible to say that both of these talents have been completely submerged in each other, and appear as a continuation of each other. As a painter Dev was recognized for his poetic painting and as a poet for his artistic talent.

Dev was born in Tehran. He received his education in the Armenian primary schools in Tehran and New Julfa. As a child he expressed his unlimited love towards art in general and especially towards literature and painting. He trained in art in Tehran, working with Morris Fabri, and then advanced to working by himself. For a while he attended the Kemal-el-Molki school, later establishing his own studio-school, which gradually became famous throughout Iran. Many of the modern Iranian-Armenian artists' talents were forged in Dev's school.

Dev worked with equal success in oil painting and in watercolors. His creative style could be characterized as based on classical principles up to the impressionistic style. As a portrait painter he sought to find the inner psychological lines of his models. In the works of his later period the emphasis is on fleeting moments of beauty, on movements, changes in expression, and moments of concentration. The same can be seen in his landscapes. Dev was also a satirist whose works appeared in the press. Thanks to his widespread activities, he was elected as a member of the Iranian Artist's Union, and an advisor for cultural affairs. He received a letter of honor from Shams Pahlavi, daughter of Shah Reza Pahlevi and twice he received medals for his participation in important exhibitions.

Dev was tirelessly dedicated to culture. And it is natural, that with his great willingness he undertook an important role in the establishment of Iranian-international and Iranian-Armenian art ties. His poetic and artistic talents were also recognized in Armenia when he was invited to exhibit his work in Yerevan.



ՎԱՐԴԵՐ

ROSES

Oil on canvas, 1952, 29 x 40cm.

Araks Abrahamian Collection, London, England



ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍ ՄԱԿԱՐԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

PORTRAIT OF MRS. ARAKS MAKARIAN

Oil on canvas, 1926, 60 x 40cm.

Araks Makarian Collection, Boston, Massachusetts

ԻՆՔՆԱՆԿԱՐ

SELF-PORTRAIT

Oil on canvas, 1943, 46 x 36cm.

Shahen Gharabegian Collection, Northridge, California


ԲՆԱՆԿԱՐ

LANDSCAPE

Oil on canvas, 1960, 39 x 74cm.

Araks Abgarian Collection, London, England







ՅԱԿՈՒ ՎԱՐԴԱՆԵԱՆ

1903 - 1983

HAGOP VARTANIAN

Բնանկարիչների շարքում տարիքով աագը Յակոբ Վարդանեանն է: Ծնել է Թեհրանում: Մասնագիտական կրթություն չի ստացել, հմտացել է սեփական ուժերով: Կարելի է ասել, հենց բնությունն է եղել նրա և՛ դպրոցը և՛ արվեստանոցը: Կառաչէն ու աղիւսէ տնակներ, նեղիկ փողոցներով անցնող մարդիկ, լեռնալանջերին օազիսների նման ծառած գիւղեր, ծառ ու ծաղիկ: Եւ այդ ամէնը՝ միշտ խաղաղ երկնքի տակ, արևի պայծառ լուսաւորութեան ներքոյ:

Սրանք են Վարդանեանի նախասիրած մոտիւները: Նա բնաւ չի ձգտում ձևափոխել իրականութիւնը, նկարչական միջամտութեամբ խախտել նրա խաղաղ ներդաշնակութիւնը: Առինքնող կերպարայնութեան է հասնում նա, վաւերացնելով պատկերող մոտիւի նոյնիսկ ամենաչնչին մանրամասնութիւնները: Վարդանեանը քաջ տիրապետում է ջրաներկի լեզվին, գիտէ նրա արտայայտչական հնարատրութիւնները, նրբօրէն է հաղորդում լուսաստւերները, լոյս ու ստւերի սահմանային գուներանգները, հասնելով ընտրած մոտիվի ամբողջական հարազատ մատուցմանը:

Վարդանեանն ունի նաև միայն մատիտով կատարած բնանկարներ, որոնց մէջ ևս նկատոււմ է նկարչի սէրը բնութեան, բուսականութեան, ծառերի մանրամասնութիւնների հանդէպ: Սակայն, ինչպէս ջրաներկերում, այստեղ ևս ամէն ինչ ենթարկւած է տեսարանը մէկ հայեացքով որսալու և զգալու նկարչի կամքին: Իրականութեան նկատմամբ Վարդանեանի վերաբերմունքը անկեղծ է, խանդավառ: Յաճախ նաև պատկերում է ծառերի բողբոջած կամ մրգերով ծանրաբեռ ճիւղեր, որոնք կարծես մօտեցւած ու մեծացած են դիտողի համար, զբաղեցնում են բնանկարի ողջ առաջամասը, առաւել շեշտելով բնութեան անանց գեղեցկութիւնը:

Վարդանեանի նկարահանդէսները յաջողութիւն են ունեցել Երևանում (1965), Թեհրանում (1970): Նրա գործերը զարդարում են Իրանի մէջլիսի դահլիճները:

The eldest of a generation of landscape painters was Hagop Vartanian. He was born in Tehran. He did not get specialized training in art, but became a master through his own efforts. One can say that nature became both his school and also his studio. His subjects were brick and clay houses, people passing through narrow streets, villages appearing as oases spread on the side of a mountain, trees and flowers, and all of that under a peaceful sky and the bright illumination of the sun.

These were the favorite themes of Vartanian's work. He never sought to change nature or reality, to destroy the peaceful inner harmony of the subject through his artistic intervention. He authenticated the smallest details of the scene. Vartanian mastered the idiom of watercolors, understanding the possibilities of its expression. He subtly communicated sun and shadow, the shading of light and shadow, attaining a completely true picture of the scene.

Vartanian also has some works done only in pencil, in which one can also see the artist's love toward nature, toward plant life and trees. Yet, as in his water colors, here also everything is subject to the scene, the will of the artist. Vartanian's approach towards reality is sincere and enthusiastic. He often showed trees blooming, their branches laden with fruit, which are enlarged for the viewer, encompassing the entire foreground of the painting, emphasizing even more the beauty of nature.

Vartanian had successful exhibitions in Yerevan (1965) and Tehran (1970). His works can be found decorating the walls of the Iranian parliament building.



ՉՄԵՈՐ ԳԵԼԵԳՈՒՆՈՒՄ

WINTER IN GELEGOON

Black ink and watercolor, 1974, 43 x 55cm.

Hilda & Vrouyr Kharakhanian Collection, Glendale, California

©1997 Alice Navasargian



ԼՐՒԱԾ ԳԻՒՂ

DESERTED VILLAGE

Watercolor on paper, 1982, 46 x 64cm.


Hagint & Petro Devetry Collection, Rome, Italy

ՓՈՐՐԻԿ ԱԶԿԻԹ

LITTLE MOSQUE

Watercolor on paper, 1965, 51 x 47cm.


Hagint & Petro Devetry Collection, Rome, Italy



ԳԻՒՂԻ ՉՄԵՈՒՆ

WINTER IN THE
VILLAGE


Watercolor on paper,
1979, 46 x 63cm.
Hagint & Petro Devetry
Collection, Rome, Italy



ԿԷՍՕՐ

MIDDAY

Watercolor on paper, 1978, 46 x 63cm.
Hagint & Petro Devetry Collection, Rome, Italy





ՄԻԻՔԱՅԷԼ ՇԱՀԲԱԶԻԱՆ

1904 -1976

MIKAYEL SHAHBAZIAN

Իբրև բնանկարչի՝ Մ. Շահբազեանին առինքնել են գիղական ու քաղաքային տեսարանները: Նկարել է հիմնականում ջրաներկով, վրձնի թեթև հպումներով: Նրա բնապատկերները, որոնք շնչում են թարմութեամբ, ներթափանցած են արևի ջերմ շողերով: Լոյսի աղբիւրը բաց, թափանցիկ, յաճախ հակադիր գունային ներդաշնակումների մէջ է: Պատկեր կառուցելու իր մեթոդով Շահբազեանը մտ է իմփրեսիոնիստների (տպատրապաշտ) նկարչութեանը:

Շահբազեանը ծնել է Արդաբիլում: Սէրը նկարչութեան և երաժշտութեան նկատմամբ դրսևորել է դեռևս մանկութեան տարիներից: Սովորել է Քեամալ-էլ-Մուլքի նկարչական յայտնի դպրոցում ապա շարունակել ուսումը ռուս նկարիչ Փօլ Մաքիի մօտ: Ապրուատը երաժշտութեամբ ապահովող Շահբազեանը իր նկարչական աշխատանքները վաճառելու մտադրութիւն չի ունեցել, պարզապէս ձգտել է աշխատել, ինքնակատարելագործել:

Շահբազեանի ստեղծագործութեան բնորոշ գծերն է խտացնում «Քերման» ջրաներկը, որը պատկերում է քաղաքային մի տեսարան: Նկարիչը ընտրել է բարձր դիտակետ: Դեղնա-կարմրաուն ու կանաչ երանգներով մատուցած ճարտարապետական կառոյցները ձգտում են դէպի նկարի խորքը: Պատկերի միջին և ետին մասերում պատկերած շէնքերը ներկայացել են գունային նոյն ուժով: Գեղանկարչական լուծման այս սկզբունքը կիրառած է նաև այլ գործերում: Դամաւանդ սարը պատկերող բնանկարում, օրինակ, ազատ ու համարձակ գունաքսւածքներով են պատկերւած առաջին մասի առարկաները՝ քարերը, տնակը, դէպի հանդիպակաց լեռը քայլող մարդիկ: Տեռում գտնուող ձիւնածածկ լեռը, շնորհիւ գունային նմանատիպ գունահնչողութեան, թուն է շատ մօտիկ, շօշափելի: Նկարչի հետապնդած նկարչական խնդիրը ակներև է՝ պատկերի ամբողջ տարածքը կազմակերպել հնչեղ գոյների միահիւս ներդաշնակութեամբ:

1948-ին Շահբազեանը մասնակցել է ՎՈԿՍ-ի կազմակերպած ցուցահանդէսին: 1971-ին անհատական նկարահանդէս է ունեցել Թեհրանի «Նայ Ակումբի» սրահում: Նկարչի արեստը վայելել է ընդհանուր սէր և գնահատանք:

Village scenes and city-scapes have been the main focus of the work of Mikayel Shahbazian. He has painted primarily in water-colors, with a light touch of the brush. His landscapes, which breathe with a freshness, are penetrated by the warm rays of the sun. The source of light is open, penetrating, and often in opposite color harmonies. In his method of construction of the painting, Shahbazian is close to the painting of the impressionistic school.

Shahbazian was born in Ardabil. His love of painting and music was expressed at an early age. He studied at the well-known Kamal-el-Molki art school, and then continued his education with the Russian artist Pavel Maki. Shabazian, who made his living with music, never thought of selling his painting, but simply sought to work, to perfect himself.

Shahbazian's artistic style is embodied in the water-color painting "Kerman," which depicts a city-scape. The painter chose a high vantage point. The architectural structures which are depicted with a yellow-red and green hue lead towards the depth of the painting. The buildings depicted in the middle and back perspectives of the painting are presented with same color intensity. This same principle of artistic solution is applied to other works as well. In the landscape which depicts Demavend mountain, the objects in the foreground are depicted with free and bold brush strokes of color: stones, huts, towards the men climbing the mountain. The snow-covered mountain in the distance, thanks to its similar color, appears very near, tangible. The issue of the painter is evident; to construct a painting whose entire expanse is organized in the harmonious interweaving of color.

In 1948 Shahbazian participated in the VOKS organized exhibit, and in 1971 had a one-man show in Tehran in the "Armenian Club" hall. The artist's work has enjoyed general love and appreciation.



ԲԻԲԻ-ՇԱՀՐ ԲԱՆՈՒ

BIBI-SHAHR BANOU

Watercolor on paper, 1962, 42 x 54cm.


Hasmik Nercissian Collection, Glendale, California



ՍԲ. ԹԱԴԵՒ ԿԱՆՔԸ
 ST. TADE MONASTERY
 Watercolor, 1968, 32 x 48cm.
 Alice Navasargian Collection
 Glendale, California



ԳԻՒՂԱԿԱՆ ՏԵՍԱԴԱՆ
 A SCENE FROM THE COUNTRY
 Watercolor, 1956, 22 x 38cm.
 Suzy Badmagerian Collection,
 Glendale, California



ԾԱՂԻԿՆԵՐ

FLOWERS

Oil on canvas, 1969, 32 x 48cm.

B. Rubina Begumian Collection, Glendale, California



ԱՖՐԱՀԱՄ ԳՈՒՐԳԷՆԵԱՆ

1908 -1991

ABRAHAM GURGENIAN

Գուրգենեանը ծնւել է Թեհրանում: Աշակերտել է Դարվիշին, որի ազգականն է եղել: Երկար տարիներ նիւրել է Նէգամիի, Սաադիի, Խայեամի բանաստեղծութիւններին պատկերազարդումներին, որոնք յաջողութիւն են վայելել:

Քառասուն տարեկան հասակում Գուրգենեանն սկսում է ուսումնասիրել Սբ. Ամենափրկիչ վանքի ձեռագիր մատեանները: Նկարչի առջև բացում է մի նոր աշխարհ: Նրա ստեղծագործութեան մէջ շրջադարձ է տեղի ունենում թէ՛ ոճական և թէ՛ բովանդակութեան առումով: Արեստագէտը հրապուրում է միջնադարի հայկական բանաստեղծութեամբ: Նրան կլանում են Նահապետ Քուչակը, Սայաթ-Նովան, ապա՝ Յ. Թումանեանն ու Աւ. Իսահակեանը, որոնց ստեղծագործութիւններով ներշնչած՝ բազմաթիւ նկարազարդումներ է կատարում: Վաղ շրջանի պարսկական մանրանկարչութեան գործերի ոճական յատկանիշները մերում են հայկականին, ստանում նոր որակ:

Գուրգենեանը հետզհետէ ընդլայնում է իր նիւթապաշարը: Նա ձեռնամուխ է լինում պատկերելու Նոր-Ջուղայի համայնքի կեանքն ու պատմութիւնը, ազգային տարազները, աշխարհիկ ու կղերական նշանաւոր գործիչներին, իրենց իրայատկութեամբ առանձնացող հինաւոր շիրմաքարերը: Նկարչին համակում է սեռտուն մի նպատակ՝ փրկել այդ ամէնը կորստից, դառնալ ազգային գանձերի վաւերագիր-նկարիչը: Իր ստեղծած նկարաշարերից նա նիւրաբերում է տարբեր թանգարանների. Նոր-Ջուղայի մշակութային անցեալին նիւրած 150 գործ հանգրուանել են Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանում, պարսկահայ պատմութեան 450 գործ ընդգրկող հաւաքածուն պահում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանում: Նոյն բովանդակութեամբ մի այլ նկարաշար դառնում է Բէլյուփի «Ճորճ Մարտիկեան» թանգարանի սեփականութիւնը:

Ա. Գուրգենեանը ցուցահանդէսներ է կազմակերպել Նոր-Ջուղայում և Թեհրանում (1952), Մերձատր Արևելքի երկրներում, Սբ. Ղազար կղզում, Երուսաղէմում, Տոնում, Վիեննայում... Նրա «Նոր-Ջուղայի տապանաքարերը» պատկերաշարը բացառիկ յաջողութիւն է ունեցել Շւեդիայում: Գուրգենեանը հայ մշակոյթի անխոնջ երախտաւորներից է:

Gurggenian was born in Tehran and received his primary education in the New Julfa Central School. He was a student of Darvish and also his relative. For many years he was dedicated to illustrating the works of the poets Nizami, Saadi, and Hafez, and these works enjoyed wide success.

At the age of forty he began to study the manuscripts kept at the All Savior's Monastery. A new world opened before his eyes. Both in a stylistic sense and also in content, his work underwent a turning point. He became enamored of medieval Armenian poetry, and was especially attracted to Nahabed Kuchak, Sayat Nova, and also to later poets Hovannes Toumanian and Avedik Issahakian. Inspired by their work he created numerous paintings. The works of his early period became closer to the Armenian style and conveyed a new approach.

Gurggenian gradually widened his thematic scope. He undertook the depiction of the life and history of the community of New Julfa, of the national dress, of famous secular and religious figures and of their ancient unique tombstones. Gradually he was affected by a new focus; to save all of that from destruction, and to become the recorder/painter of the national treasures. He donated many of his works to a variety of museums; 150 works devoted to the cultural past of New Julfa were donated to the All Savior's Monastery museum, and a collection of 450 works devoted to Iranian-Armenian history are kept in the Museum of the Mother See of Etchmiadzin. Another series with the same themes was donated to the George Mardikian Museum in Beirut.

Gurggenian organized exhibits in New Julfa and Tehran (1952), in the Middle East, on the Venetian island of San Lazzaro, in Jerusalem, in Rome, and in Vienna. His collection devoted to "The Tombstones of New Julfa" gained exceptional recognition in Sweden. Gurggenian was an indefatigable supporter of Armenian culture.




ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Watercolor on paper, 1960, 19.5 x 12cm.

Jenik & Shahan Khachikian Collection, Boston, Massachusetts



ՄԱՆԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor and gouache, 1948, 22cm. dim.

Evik & Hrair Karapetian Collection, Glendale, California



ՄԱՆՐԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor and gouache, 1948, 22cm. dim.

Evik & Hrair Karapetian Collection, Glendale, California



ԱՂՕԹԻՐ

PRAYER

Watercolor and gouache, 1962, 50 x 22cm.

Shahen Gharabegian Collection, Northridge, California

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

SAYAT-NOVA SERIES

Watercolor and gouache, 1962, 50 x 20cm.

Shahen Gharabegian Collection, Northridge, California






ՕՄԱՐ ԽԱՅԻԱՄԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

OMAR KHAYIAM SERIES

Watercolor on paper, 1964, 19.5 x 12cm.

Jenik & Shahn Khachikian Collection, Boston, Massachusetts



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

1910

HARUTIUN MINASIAN

1950-ական թականներին Մերձատր Արևելքի, ԱՄՆ-ի ու Եվրոպայի մի շարք քաղաքներում կազմակերպում են Մինասեանի անհատական ցուցահանդեսները, որոնք արժանանում են դրատալից արձագանքի: Նշանակալից էր յատկապես Փարիզի նկարահանդեսը, որի կապակցությամբ հանդես է եկել յայտնի արևեստարան Մաքսիմիլիան Գոթիեն: Փարիզի ժամանակակից արեստի թանգարանը ձեռք է բերում նկարչից երկու աշխատանք: Իսկ Ռոժե Բասչետտի և Ժակ Բալի կազմած մեծածառալ արքունում («Միջազգային Արեստի Հրաշալիքներ») որպես իրանական արդի արեստի լաագոյն օրինակ ներկայացում է Մինասեանից մէկ գործը՝ հեղինակի ու նրա արեստի մասին ծանօթագրութեամբ:

Այս յաջողութիւնն ինքնին հայ նկարչի բնատուր տաղանդի ու վարպետութեան, իր յղացումները սեփական լեզուով արտայայտելու կարողութեան պերճախօս հաստատումն է: Հետագայ տարիներին Մինասեանն իր ներշնչումները սկսում է խարսխել դասական սկզբունքներին: Այս խնդրում թերևս որոշակի դեր են խաղում նրա հոգում ապրող մանկութեան անսնոց յիշողութիւնները:

Մինասեանը ծնել է Կասպից Ծովի ափին, Ռաշտ քաղաքում: Զարմանալի կը լինէր, եթէ երազկոտ պատանու վրայ խոր տպատրոպիւն չգործէր ծովը, իր վերացական, անիրական թագող, յաիտեան շարժուն ու անշարժ, անսահման ու խորհրդաւոր տեսքով: Զարմանալի պիտի լինէր նաև, եթէ իրանահայ արեստը չծնէր իր ծովանկարչին: Մինասեանին կարելի է համարել ծովի մեծ երգիչ Յ. Այվազովսկու յետնորդներից մէկը, նրա սկզբնատրած հայ ծովանկարչության մտիկանը:

Ծովին նիրասօ յի բագսաթիւ գօտաներում Մինասեանը խորապէս գգում է ջրային տարերքի խռովայոյգ ու փոթորկոտ շունչը: Նա գարմանալի անկաշկանդ ու համոզիչ, ճշմարտացի է պատկերում ամպալից երկինքը, ծովի վրայ թաալող վերջալոյսի ու լուսնի ցլքերը, դէպի ափ սուրացող, ժայռերին բախող ալիքների շարժումը...

1996-ին Մարսէլի «Բանթինի» թանգարանում կազմակերպեց «Ծովի Երգը» խորագիրը կրող հայ ծովանկարիչների ցուցահանդեսը, որը ջերմ ընդունելութիւն գտաւ ու ընկալեց իբրև կարօտի երգ հայրինիքի մասին: Ծովի իր «երգով» այդ ցուցահանդեսին մասնակից էր նաև Յարութիւն Մինասեանը:

In the 1950s, individual Minasian exhibitions, organized in cities throughout the Middle East, United States, and Europe, earned laudatory receptions. The exhibition in Paris was especially significant, because of the presence of the famous art critic, Maximillian Gotier. The Paris Contemporary Art Museum has two of Minasian's works. One of Minasian's works is discussed in the large album "Wonders of International Art" by Roger Bascheddi and Jaques Balei, as one of the better examples of modern Iranian art.

His success as an Armenian painter is a result of his natural talent and mastery and his creations are an eloquent affirmation of his ability to express himself through his own artistic idiom.

In later years, Minasian began to base his inspiration more on classical principles. Perhaps this was due in part to the unforgettable childhood memories which were still alive within his soul.

Minasian was born in the city of Resht on the Caspian sea shore. It would have been amazing if the sea had not left a deep impression on the young man, with its abstract, almost unreal, eternal movement and calm, and its boundless and mysterious form. It would also have been amazing if Iranian-Armenian art had not produced its painter of the sea. Minasian, the "The Last Mohican" of that school, can be considered therefore as one of the students of the great seascape artist Hovannes Aivazovski, founder of the outstanding school of Armenian seascape art.

In Minasian's numerous canvases devoted to the sea, one can sense how deeply he felt the elements and stormy breath of the sea. He realistically portrayed in an unfettered and convincing way, the cloudy skies, the last rays of the sun and moon playing on the sea, and the movement of the waves crashing toward the rocks and the shore.

The exhibit in Marseilles' Cantini Museum in 1996, dedicated to Armenian painters of the sea, "The Song of the Sea," received a warm reception and was seen as a song of longing about the homeland. Minasian also participated in the exhibition with his seascape titled "With Song."

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎԻՆ
ԲՈՒՇԵՐԻ ՄՕՏ

SURF NEAR BUSER

Oil on canvas

1990, 65 x 81cm.

*National Gallery of
Armenia, Yerevan*



ԾՈՎԸ
ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ

SEA AT SUNSET

Oil on canvas

1971, 65 x 95cm.

*Janet & Martik Hovsepian
Collection
Beverly Hills, California*





ՍՄԲԱՏ ՏԵՐ-ԿԻՐԵՂԵԱՆ

1913

SUMBAT DER-GUREGHIAN

Սմբատ Տեր-Կիրեղեանի ստեղծագործութիւնը յատկանշում է խոհա-քնարական բնոյթով: Բնութեան ու գեղջկական առօրեայի նրա պարզ, անպաճոյճ պատկերումները տոգորած են լռութեամբ ու թախիծով: Նկարիչն ասես զրոյցի է բռնել բնութեան հետ, մի տեսակ մարդկայնացնել այն, հաղորդելով նրան արեստագէտի իր յոյզերն ու ապրումները: Նախ և առաջ այս յատկութիւնն է պայմանաւորում Սմբատի նկարչութեան գեղարեստական արժէքը, նրա ցուցահանդէսների յաջողութիւնը:

...Լեռնային գմայլելի կիրճում, ուր կապուտակ գետակն է խոխոջում, յանկարծ ուշադրութիւն է գրաւում չորացած մի ծառ: ...Կենդանիների հետ իր ամենօրեայ ճանապարհն անցնող մարդը գլխահակ է, մտածկոտ: ...Գետակի ափին, լացքով զբաղած կանանց մէջ, երիտասարդ մի գեղջկուհի սևեռուն հայեացքը յառել է հեռուն...: Թւում է աննշան պահեր են, սակայն, արևով ողողած անդորր միջավայրին հակադրելով, դրանք դիտողին յուշում են, որ հեղինակը բանաստեղծի նրբազգացութեամբ է ընկալում կեանքի հակասութիւնները: Նրա նկարները կարծես խտացնում են Վահան Տերեանի խօսքերը.

Իմ սիրտը միշտ, մի անանուն ցաւ է տանջում...

Կայ մի սորմոք, խոր ու թաքուն, ամէն ինչում:

Սմբատը ծնել է Նոր-Ջուղայում: Հայկական դպրոցից յետոյ յաճախել է Իսֆահանի անգլիական քոլէջը: Արեստասէր պատանին 1930-32-ին աշակերտել է նկարիչ Սարգիս Խաչատուրեանին: 1948-ին Աբադանի անգլիա-իրանական նաթային ընկերութեան ակումբում կազմակերպում է իր առաջին անհատական ցուցահանդէսը: Այնուհետև, յաջողութիւնից ոգևորւած, մեկնում է Իտալիա, Ֆրանսիա, ապա կատարելագործում է Լոնդոնի նկարչական դպրոցում: Իրան վերադառնալուց յետոյ՝ ցուցահանդէսներ է ունենում Աբադանում (միայն դիմանկարների), Մասջետ-Սուլէյմանում, Սաուդական Արաբիայում և այլուր: Ջրաներկերից զատ Սմբատը աշխատել է նաև գուաշով և իւղաներկով:

1993-ին արդէն Քալիֆորնիաքնակ նկարչի Երևանում բացած ցուցահանդէսը հետաքրքրութեամբ ընդունեց հայրենի արեստասէրների շրջանում:

Sumbat Der-Gureghian's works are characterized by a mysterious-lyrical nature. His simple depictions of nature and village life are imbued with silence and grief. It is as if the artist is in a conversation with nature, in a way has humanized it, communicating to it the artist's emotions and feelings. First and foremost it is this quality which is apparent in Sumbat's work, and the reason for the success of his exhibitions.

In a beautiful mountainous ravine, where the blue stream runs, suddenly a dried up tree captures the attention. The man who meets with the animals every day has his head-bowed, thinking. On the shores of the stream, among women occupied with their wash, a beautiful young village woman has her gaze fixed in the distance. It seems as if they are unimportant moments, yet, in the sun drenched peaceful environment, in contrast, they remind the viewer, that the painter understand with the subtlety of the poet, the contradictions of life. His works seem to condense the words of Vahan Terian,

*My soul always suffers under an unnamed pain,
There is a grief, deep and hidden, in everything."*

Sumbat was born in New Julfa, and after attending Armenian school, in the English College of Isfahan, the art loving youth from 1930-32 was a student of the artist Sargis Khachatourian. In 1948, his first one-man show was organized in the clubhouse of the Anglo-Iranian oil company. Thereafter, inspired by his success, he left for Italy, France and then perfected his art in the London School of Art. After returning to Iran he held shows in Abadan (only portraits), Masjet-Suleyman, Saudi Arabia and other places. Apart from water-colors, Sumbat also worked in oils and gouache. In 1993, the artist who by then was already living in California, had his exhibit in Yerevan greeted with interest by the Armenian art-lovers.



ՎԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐ ՎԱՅԿԱԿԱՆ ՓԵՐԻԱ ԳԻՂՈՒՄ, ԻՍՖԱՀԱՆ
WEDDING DANCE AT THE ARMENIAN VILLAGE OF PERIA, ISFAHAN
Gouache on paper, 1981, 20 x 24cm.
Private Collection



ՏԵՍԱՐԱՆ ՆԱՅԿԱԿԱՆ ՓԵՐԻԱ ԳԻՐԴԵՅ, ԻՍՖԱՀԱՆ

A SCENE FROM THE ARMENIAN VILLAGE OF PERIA, ISFAHAN

Watercolor on paper, 1991, 43 x 58cm.

Private Collection



ՆՈՎԻՆԸ

THE SHEPHERD

Watercolor on paper,

1984, 44 x 60cm.

Private Collection